Агаджановъ Минасъ.

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Ի 1859 ի 22 Յունվարի.

# ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

ԱՍԱՑԵԱԼ ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ
ԽՈՒՐԻՆ ԱՍՈՐԻՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ ՏԵԱՌՆ
ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՑ ԲԱՐԵԿԱՐԳԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՏՊԵԱԼ

1843

Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ
ԱՊՈՒՉԵԽՑԻՈՑ


Ե

## ԱՂՕԹՔ ԶՕՐԱՒՈՐ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ԵՓՐԵՄԻ ԽՈՒՐԻՆ ԱՍՈՐՒՈՅ

# ԱՍԱՑԵԱԼ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

1 Տե՛ս տ̃ր զտառապանս իմ, և
զցաւս հոգւոյ իմոյ բազ-
մամեղիս · դա՛րձ՝ ներեա՛ և ՚ի
քեզ առաջնորդեա՛ ։ Որ ասա-
ցեր՝ դարձարո՛ւք առ իս, և ես
դառնամ առ ձեզ ։
2 Ինձ լքելոյս ողորմեա՛ · ինձ
եղկելւոյս օգնեա՛ · ինձ խաւա-

րելոյս Ճառագայթեմ · ինձ մո-
լորելոյս առաջնորդեմ , որ լէ
եմ մեղօք և անթիւ յանցանօք ,
և՚ի յորձանս անօրէնութե տա-
րաբերեալ ծփիմ ։

3 Ող պետրոսին ձեռնարկեմ ·
գոչեմ որպէս մաքսաւորն ար-
դարանալ ։

4 Շնորհեմ ոտ զաւազակին ·
բայց ինձ զդուռն կենաց Ճանա-
պարհին և մեծ արքունական ա-
ռագաստին ։

5 Ով խորք մեծութե և իմաս-
տութեան՝ կալ զմեռնեալս՝ որ
՚ի խորս ծովուն անկեալ եմ մե-
ղօք · զերծո և զօրացո զիս առ-
նել զկամս քո , սգալ և լալ ՚ի
տուէ և ՚ի գիշերի զիմ անօրէ-
նութի և զհեղգութիս իմ ։

6 Աղբիւրդ կենդանութեան՝ ար-
բո՛ զծարաւ հոգիս իմ յառա-
տաբուղխ վտակէ քումմէ, որ
պապքեալ տոչորիմ ՚ի բաղում ա-
նօրէնութեանց իմոց. խթեա՛ ՚ի քա-
րացեալ սիրտ իմ, և հա՛ն ինձ ար-
տասուս ապաշխարութեան ։
7 Պանծանք իմ բարութեանց՝ շը-
նորհեա՛ ինձ դանկի միոյ չափ
՚ի բաղում քո առատ բարեացդ,
որ չարաչա՛ր եմ աղքատացեալ և
մերկացեալ. զգեցո՛ և կերակրեա՛
զիս արտասուօք ապաշխարութեան ։
8 Լոյս ճշմարիտ քո՝ որ լու-
սաւորես զամ մարդ, լուսաւոր-
եա՛ զխաւարեալս մեզօք. բա՛ց
զաչս սրտի իմոյ, և հաստատեա՛
յերկիւղ և ՚ի սէր պատուիրա-
նաց քոց ։

9 Մ՛ի դատեր, և մի՛ դատա-
պարտեր զիս տէր ըստ անբաւ
զազիր գործոց իմոց. և մի՛ կա-
ցուսցես զիս ընդ այլոն՝ որք զայ-
րացուցին զքեզ. այլ ընդ փա-
ռաւորեալսն փառաւորեա՛, և
ընդ պսակելոցն պսակեա՛, և ընդ
բերկրելոցն ուրախացո՛։
10 Շա՛տ է ինձ տէր, բայց
յուսամ յողորմութիւնդ քո.
զի և շունք կերակրին 'ի փշրա-
նաց անկելոց 'ի սեղանոյ տեառն
իւրեանց. շուն կոչեա՛ զիս տ͞ր՝
զի գայցեմ զկնի քո։

Հովիւ բարի՝ խնդրեա՛ զիս
զմոլորեալս. նաւապետ բարի
յո՞՝ փրկեա՛ զիս 'ի բազմութե͞ ալ-
եաց ծովու մեղաց իմոց, և տուր
ինձ նաւահանգիստ խաղաղութե͞։

11 Տո՛ւր ինձ տէր սուգ, և
արտասուօք կարողացո՛ զմարմինս
իմ. կակղացո՛ զքարացեալ սիրտ
իմ, և ժողովեա՛ զմիտս իմ 'ի քեզ:
Ջնջեա՛ զբազմութի՟ յանցանաց
իմոց, և շնորհեա՛ ինձ զօգուտն
իմ. ընկալ և մի՛ անտես առներ
զհառաչանս սրտի իմոյ:
12 Տո՛ւր ինձ իմաստութի՟. և
տնկեա՛ տ՟ր զահ և զերկիւղ քո
'ի սրտի իմում: Լուսաւորեա՛
զխորհուրդս իմ. կարողացո՛ ըզ-
մարմինս իմ՝ ժուժկալութ՟բ
կալ 'ի պատուիրանի քում յա-
մենայն ժամ:
13 Բա՛ց տէր զաչս սրտի իմոյ,
և լուսաւորեա՛ հոգւովդ ս՟բվ:
Պարգևեա՛ ինձ առողջ խոր-
հուրդս և առաքինի վարս՝ ող-

բալ հանապազ, ահիւ և դողու-
թեամբ կալ առաջի յամենայն
ժամ անզբաղ:

14 Ով բարերար և մարդասէր
տէր՝ առանց չարչարանաց և
ժուժկալութեց զիա՛րդ ազա-
տեցայց ՚ի բազմութէ մեղաց ի-
մոց. զի մարմնով տկա՛ր եմ, և
հոգւով խաւար. ողորմեա՛ տր՝
և ոպ̃ կամիս օգնեա՛ ինձ:

15 Անոխակալ տէր՝ մի՛ վասն
բազում չարեաց իմոց անտես
առներ զիս. այլ դարձի՛ր ՚ի
յիս, և դարձո՛ զամենայն ցան-
կութիւն իմ ՚ի քեզ. և զքեզ
տուր միայն սիրել ՚ի բոլոր սրտէ
իմմէ: ՚ի նուազ և յանպաճոյճ
կերակրոց ամբողջ պահեա՛ ըզ-
մարմինս իմ:

16 Պատկերացո՛ տէր՝ զանհրա-
ժեշտ գալուստ քո առաջի աչաց
իմոց. և դողացո՛ զմարմինս իմ
սգալ և լալ անդադար յերկիւղէ
ահեղ դատաստանաց քոց. և մի՛
փակեր զգութ արարչական սի-
րոյ ՚ի ստեղծուածոյս քո՝ որ մե-
ղօքս եմ մեռեալ:

17 Ընձեցո՛ տէր զբարիս գործել
ինձ յամենայն ժամ. և խափանեա՛
զամենայն չարիս ՚ի չար մտաց իմոց.
՚ի պիղծ և յանուղղայ գնացից՝
և՚ի չար սովորութենէ դադարեցո՛
զիս. և հաստատեա՛ յերկիւղ և՚ի
սէր պատուիրանաց քոց:

18 Արեգակն արդարութեան՝ փըր-
կիչ իմ և ազատիչդ Յիսուս Քրիստոս՝ ՚ի լոյս
քո ապաւինիմ, լուսաւորեա՛ և
ջերմացո՛ զսիրտս իմ: Հրակիզեա՛

զչար խորհուրդս իմ, և հալեմ
զսառնամանիք մեղաց իմոց:
Շնորհեա՛ տ̃ր գարուն հոգ-
ւոյ իմոյ՝ ծաղկիլ և պտղաբերել
զարդարութե̃ պտուղն:
19 Ազատիչդ քս̃՝ ազատեա՛ զիս
՚ի դառնաշունչ օդոց մեղաց ձը-
մերայնոց. զխաւարեալ և զսա-
ռուցեալ հոգիս իմ պայծառացո՛
և ջերմացո՛. և ցօղեա՛ զցօղն շը-
նորհի ջերմութե̃ քո ՚ի յանդաս-
տանս մտաց սրտի իմում:
20 Շնչեա՛ տ̃ր զհարաւ քաղց-
րութեան շնչոյ հոգւոյդ սրբոյ՝
՚ի խստացեալ և ՚ի թանձրացեալ
սիրտս իմ. և զարթո՛ որոտընդոստ
փայլատակմամբ քո զսառնացեալ
և զցամաքեալ միտս իմ:
21 Բա՛ց տէր զփակեալ դուռն

սրտի իմոյ , և ծածկեա՛ 'ի ներքս
զլուսաւորութի՛ւն ճառագայթից
քոց։ Արբեա՛ և զաղտ մեղաց ի-
մոց , և զվէրս հոգւոյ իմոյ բը-
ժշկեա՛ · ամրացո՛ երկիւղիւ քո ,
և զօրացո՛ առնել զարդարութի՛ւն
յամենայն ժամ։

22 Ի՛ղբերացո՛ տէր զգլուխ իմ
'ի բղխումն արտասուաց · լուա՛
զթարախ հոգւոյ իմոյ , և սրբեա՛
զգայարանս իմ։ և զգործողս չար-
եաց՝ փոխարկեա՛ 'ի զղջումն ջերմ
սիրոյ քոյ , զգաստ մարմնով կեալ
'ի պատուիրանի քում։

23 Ջգեա՛ տէր զձեռն քո 'ի նա-
ւաբեկեալս՝ որ ընկղմեալս եմ
'ի խորս չարեաց · փրկեա՛ զիս 'ի
սաստիկ ծովածուփ բռնութե՛
մեղաց իմոց ալեաց։ Սանձեա՛

տ՟ր և կարկեա՛ զխստերախս միտս իմ ՚ի զբաղմանց և ունայնութե՟ց կենցաղոյս ։

24 Երբէ՞ տէր զծարաւ հոգւոյ իմոյ յառատաբուղխ շնորհէ քումդ․ և մի՛ անտես առնէր ըզ-տոչորումն սրտի իմոյ ։ Պապակիմ ՚ի տապոյ չարեաց իմոց, զովացո՛ և լուա՛ զապականեալ և ըզհոտեալ շրթունս իմ ջրով ողորմութեան քո ։

25 Ճառագեա՛ տ՟ր զլուսաւորութ՟ի և զխաղաղութ՟ի շնորհաց քոց ՚ի սրտի իմում․ և զցաւագին գիշեր մեղաց ՚ի մտաց իմոց հալածեա՛ ․ և մարմնոյ իմոյ շնորհեա՛ զարխական վարս՝ առաքինութե՟ կեալ ՚ի հաճոյս կամաց քոց ։

Եւ հա՛ն զփուշ մեղաց ՚ի սըր-

տէ ինմէ, զի հոգի իմ չարաչար
վիրաւորի. և սերմանեամ սերմն
բարի ՚ի սրտի իմում աճեցուցա-
նել և պտղաբերել զարդարութե՟
պտուղն:

26 Հալածեա՛ տէր զխաւար ՚ի
հոգւոյ իմոյ, և զգեցո՛ ՚ի լոյս ար-
դարութե՟ ճառագայթից քոց:
Զարդարեա՛ երկիւղիւ՝ զղջմամբ
և արտասուօք զսիրտ իմ, երկրն-
չել ՚ի դատաստանաց քոց, և պա-
հել զա՟մ պատուիրանս քո:

27 Զարթո՛ զիս տ՟ր յահագին
խորութէ՟ քնոյ մեղաց. և զտարա-
կուսեալ մարմինս իմ զգաստացո՛
յա՟մ գործս բարիս, խորհիլ
միշտ մեծաւ երկիւղիւ, և առ-
նել զհաճոյս քո յա՟մ ժամ:

28 Պղաստեա՛ զիս տ՟ր ՚ի ծառայ-

ութենէ մեղաց․ և խառնեա՛ 'ի
Թիւս ծառայից քոց՝ որք սիրե-
ցին զքեզ և զպատուիրանս քո
պահեցին․ տո՛ւր զերկիւղ ն͞ց 'ի
սրտի իմում, և ուսո՛ զիս գնալ
'ի շաւիղս գնացից նոցա ։
29 Խեթեւացո՛ զկարիս մարմնոյ
իմոյ, և յաճախեա՛ յիս զշնորհս
հոգւոյդ ս͞բյ՝ լինիլ տաճար և
բնակարան ա͞ծային կամաց քոց,
անյագ սիրով սիրել զքեզ և ա-
տել զա͞մ ցանկութիս և զսէր աշ-
խարհիս այսորիկ՝ որով եղև կո-
րուստ և անցումն հոգւոյս ։
30 Ողորմեա՛ տ͞ր յանմարդաբը-
նակ անապատիս, և 'ի ձեռն սո-
րին արժանաւորեա՛ զիս խառ-
նիլ ընդ առաջին սուրբ հարան-
ցըն՝ արի և զգաստ ժուժկա-

ըուք ժառանգել զխոստացեալ
պարգևսն։
31 Առաջնորդեա ինձ Տէր ՚ի
նեղ և ՚ի նուրբ ճանապարհն,
որ առաջնորդեցեր սրբոց քոց · և
զօրացո զտկարութիւն իմ՝ ժուժ-
կալութեամբ և համբերութեամբ գնալ
՚ի ճանապարհն քո ջերմեռանդ
սրտիւ։
32 Նայեաց Տէր ՚ի նեղեալ և ՚ի
թարախեալ հոգիս իմ, և լուա
աստուածային ջրով · հոգևոր աղիւդ
համեմեա, և անուշահոտ իւղով
սրբով օծեա, և զկատարեալ ա-
ռողջութիւն ընձեռնեա։
33 Նոսրացո Տէր զքուն աչաց
իմոց, և թափեա զնիրհումն ՚ի
գլխոյ իմոյ · զի ծանրացեալ
դանդաղմամբք՝ պաշարիմ զմարմ-

նըս իմ։ Արա՛ զիս տ՟ր արթու-
նըս և պատրաստ յա՟մ ժամ,
զի զգաստութ՟ե և արդարութ՟ե
վարեցից զկեանս իմ։
34 Տե՛ս տ՟ր զլքումն որովայնի
իմոյ որ զօրացեալ է ՚ի վ՟ր իմ,
հանապազ ցանկայ կերակրոյ և
ըմպելւոյ՝ և համեղութ՟ե խորտ-
կաց․ այլ դու տ՟ր յա՟մի կարօղ՝
կտրեա՛ զցանկութիւն մարմնոյս
տենչանաց։
35 Եւ քանզի միտք իմ ցնդեալ
պղտորեալ բանդագուշեալ շրջի
՚ի հոսանս երկրաւոր կենցաղոյս․
այլ դու տ՟ր լուսաւորեա՛ զաչս
հոգւոյս առանց զբաղմանց և
երկմտութ՟եց, այլ և զգաստ ա-
մենայորդոր փութով գալ զհետ
ա՟ծային սիրոյ քո։

36 Հալածեա՛լ որ զա՟մ չար մը-
տածմունս երկրաքարշս 'ի խոր-
հրդոց մտաց իմոց · արմատ բար-
եաց տնկեա՛ հաստատութի՟ 'ի
սրտի իմում, և պտուղ շնորհաց
'ի հոգիս իմ նկարեա՛ ։

37 Ա՟ղաչեմ բա՛րերար և ողոր-
մած տէր՝ արթունս և զուար-
թունս պատրաստեա՛ զիս · ուսո՛
ինձ գնալ 'ի ճանապարհս քո բա-
րի , զի արժանի եղէց մեծի փա-
ռաց քոց ։

38 Ի՟ւ քանզի ցանկութի՟ ճա-
շակման՝ ամենայնիւ զբաղեցու-
ցանէ զմիտս իմ · արդ՝ հալածեա՛
զորկորստութի՟ յինէն յորմէ խա-
բեցայ միշտ · և կերակրեա՛ զիս
երկնուղիւդ քով սիրով ։

39 Աւաքեա՛ որ զմի 'ի սերով-
բ

թեւցքոց՝ բերելով կայծակն հը-
րոյ մերձեցուցանել 'ի շրթունս
իմ. և հանցէ 'ի բաց զանօրէնու-
թիւնս իմ; և զմեղս իմ սրբես-
ցէ. և զխորհուրդս իմ մաքրես-
ցէ, և զաղտեղութիս իմ ջնջես-
ցէ. և լուսաւորեսցէ զմիտս իմ՝
ժառանգել նոյնաւ զկեանսն յա-
ւիտենից:

40 Մատուցեա՛ տր̃ զբաժակ ու-
րախարար հոգւոյդ սբյ 'ի յեղ-
կելիս՝ որ ծարաւիմս առ քեզ.
արբո՛ և զուարթացո՛ զեռանդն
սիրոյ քո. լո՛յծ և 'ի բա՛ց ջնջեա
զմրուր դառնութե յանցանաց
իմոց:

41 Մատուցեա՛ տէր զլոյս քո, և
լուսաւորեա՛ զմիտս իմ՝ և ըզ-
խորհուրդս իմ լուսով գիտութե̃

քո • զխաւար մտաց իմոց հա-
լածեա, և զանկարութիւն անձին
իմոյ կակղացո՛ 'ի ջանս և 'ի վաս-
տակս հոգւոյ իմոյ ։

42 Առաքեա տ̃ր զհրեշտակ խա-
ղաղութեան քո վերակացու և
պահապան անձին իմոյ՝ ոչ̃ իշ-
խանութ̃ի, տնալ 'ի վերայ իժի
և քարբի, և կոխել զա̃մ զօրու-
թ̃իս թշնամւոյն • և զիս պահեա
տէր որպէս բիբ ական ընդ հո-
վանեաւ թևոց քոց ։

43 Յորժամ երթայցեմ 'ի ճանա-
պարհի, մի՛ թողուր զիս միայն •
այլ առաքեա զօգնականութ̃ի քո
զկնի իմ՝ պահելով զիս յամե-
նայն փորձութեանց սատանայի 'ի
տուէ և 'ի գիշերի, և չտալ թոյլ
մեղանչել յողջ-ողջ և թոյլ մը-

ատոյ իմոյ , այլ կոծել զկոծ 'ի
վ՟ր մեղաց և անօրէնութ՟ե իմոյ ։
44 Պահեա՛ զիս տ՟ր 'ի բանից և
'ի գործոց , 'ի տեսութեանց և 'ի
գերիչ խորհրդոց • և զերկիւղ
դատաստանի քո տպաւորեա՛ 'ի
սրտի իմում , անզբաղ յօժա-
րութ՟ե մտօք փութալ և պահել
զպատուիրանս քո ։
45 Փակեա՛ տ՟ր զդուռն մեղաց
իմոց • և բա՛ց ինձ զդուռն լու-
սոյ և արդարութ՟ե , զի երկիւղա-
լից սիրով եկից զհետ իմոյ արար-
չիդ , որ ասացեր՝ եկա՛յք առ իս
ա՟մ աշխատեալք ։ Եւ դարձեալ
թ՟է՝ որ խնդրէ , առնու • որ
հայցէ , գտանէ • և որ բաղխէ՝
բացցի նմա ։
46 Նայեա՛ց տ՟ր 'ի մերկութիւն

անձին իմոյ՝ զոր կողոպտեաց
Թշնամին . և այժմ խայտառակ
և ամօթալից կամ առաջի քո ։
Մարդասիրեա՛ և զգեցո՛ ինձ
հանդերձ , մօյծ և ուրախացո՛ 'ի
կոչումն բազմելոց քոց ։

47 Զգեցո՛ ինձ տէր զպատմու-
ճանն զառաջին զոր մերկացայ
մեղօք իմովք . ցո՛յց զանոխակա-
լութիւն քո յիս , և լուսափայլ
ողորմութեամբ քո զարդարեա՛ զը-
մերկութիւն իմ ։

48 Լո՛ւր տէր աղաղակի անառա-
կիս՝ որ ամօթով կամ առաջի
քո . զգանձ հայրենի վատնեալ՝
սովամահ կորնչիմ , կերակրիլ
հաւասար եղէ խոզից անասնոց
և նմանեցայ նոցա ։

49 Մ՛ի մերժեր զիս տէր 'ի հայ-

րենի գթոյ քոյ · համարձակիմ
'ի խնամ սիրոյ քոյ · 'ի ծնողէդ-
վերջացայ, և զորդիութի իմ ու-
րացայ ։ Հայր՝ մեղայ յերկինս
և առաջի քո, չեմ արժանի կո-
չիլ որդի քո, արա զիս իբրև մի
'ի վարձկանաց քոց ։

50 Զարդարեա՛ զիս տէր մե-
ծաւ երկիւղիւ քո · և դարձո՛
յանառակութե 'ի յարդարութի,
յաղտեղութե՝ 'ի սրբութի, 'ի
ծուլութենէ՝ 'ի զգաստութի,
ժուժկալութբ գնալ 'ի ճանա-
պարհս քո ուղիղս ։

51 Դադարեցո՛ զիս տէր 'ի չա-
րաչար խորհրդոց իմոց, և յառա-
նելոյ զկամս մտաց իմոց և մարմ-
նոյ իմոյ · զահագին օր դատաս-
տանն քո տր նկարեա՛ առաջի ա-

չաց իմոց՝ դողալ և սարսիլ ՚ի դա-
տաստանաց քոց ։

52 Պայծառացո՛ տր զլապտեր
հոգւոյ իմոյ որպէս կուսանացն
իմաստնոց ․ և շնորհեա՛ պատրաս-
տիլ արթնութբ՝ ընդ առաջ ե-
լանել երկնաւոր փեսայիդ, զի
մի՛ մնացից արտաքս որպէս յի-
մար կուսանսն ։

53 Ծանո՛ տր ինձ զճանապարհս
քո, և ուսո՛ ինձ զարդարութիս
քո ․ հեռացո՛ տր զմարմինս իմ
՚ի խորհրդոց չարեաց՝ և հաս-
տատեա՛ յերկիւղ բարեաց, տբ
և անարատ կեալ առաջի քո յա-
մենայն ժամ ։

54 Զանօրէնութիս իմ ջնջեա՛
տր ․ ՚ի յոյս բարեաց և յերկիւղ
քո զմիտս իմ բևեռեա՛, լցեալ

սիրով սպասել և այն ունել մե-
ծի գալստեան քո ։

55 Զօրացո՛ զիս տ̃ր 'ի պատուիրանաց քոց՝ անսալ երկիւղիւ, դողալ և սարսիլ 'ի դատաստանաց քոց, խնդրել զարդարութի̃ և զիրաւունս երեսաց քոց, առնուլ զպարգևս շնորհաց քոց ։

56 Արձակեա՛ զիս տ̃ր 'ի կապանաց մեղաց իմոց. և զհնացեալս մեղօք՝ վերստին նորոգեա՛. և զխաւարեալս 'ի ցանկութե̃ մարմնոյս՝ լուսաւորեա՛ գնալ 'ի ճանապարհս խաղաղութե̃, զի տեսցեն աչք իմ զփրկութի̃ քո՝ զոր պատրաստեցեր սրբոց քոց ։

57 Բժշկեա՛ տէր զանբժշկելի հիւանդութի̃ իմ՝ որ կարկամ-

եալ դնիմ 'ի մահիճս մեղաց ի-
մոց, և դեգերեալ կամ 'ի դուռն
երկրորդ սելովմայ, սպասել և
ակն ունել մեծի գալստեան քո։
58 Հրամայեա՛ տ̅ր ինձ ո՛չ զան-
դամանութիւն առողջանալ՝ խոր-
տակել զանկողինս ցաւոց իմոց,
շրջել ընդ կամարարս քո 'ի տան
տ̅ն, և 'ի գաւիթս ա̅յ ծաղկել և
ո՛չ մեղանչել։ Խորտակեա՛ տէր
զբռնութի̅ սանյի· հա՛ն և 'ի բա՛ց
ընկեա՛ զզօրութի̅ նորա· արգել
զյարձակումն ն̅ր 'ի վերայ իմ·
զի տարապարհակ վարեալ զմար-
մինս իմ, տանի յընդարձակութի̅
ճանապարհի՝ որ տանի 'ի կորուստ
և յապականութի̅։
59 Յիշեցո՛ տ̅ր զբաղեալ և մո-
ռացեալ մտաց իմոց՝ զահաւոր

և զսոսկալի դատաստանս քո , ընդ
պատիւ և զփառսն արդարոցն ,
և զաններելի տանջանսն մեղա-
ւորացն . և նոքօք զարհուրեալ
դողացո՛ զմարմինս իմ՝ տեսա-
նել զմահ հանապազ առաջի ա-
չաց իմոց ։

60 Բեւեռեա՛ տ̃ր զմարմինս իմ
ընդ երկիւղ քո՝ և ը̃ սէր պատ-
ուիրանաց քոց , և զհրամայեալսն
՚ի նմա՝ երկիւղիւ լսել , առանց
ձանձրութե̃ կատարել միշտ՝ և
մերկանալ ՚ի մեղաց և ՚ի ցանկու-
թե̃ց կենցաղոյս , և պայծառա-
նալ վարուք առաքինութե̃ ։

61 Փրկեա՛ զիս տ̃ր ՚ի գաղտնա-
ձիգ նետից սա̃նյի , որ բազում
մեքենայիւք պատեալ պաշարէ
զիս ։ Աւար առեալ զմիտս իմ՝

վարէ ՚ի գերութ̅ի ցանկութ̅ե մե-
ղաց, առնելով ծաղր և այպն կա-
տականաց թշնամեաց։

62 Միրացո զիս տէր յերկիւղ-
քո, և զօրացո զօրութ̅բ քո.
զհիւանդութ̅ի հոգւոյ իմոյ ա-
ռողջացո, և զցաւս մարմնոյս
բժշկեա. և զջերմութ̅ի սրտի
քո՝ հաստատեա ՚ի սրտի իմում,
չարչարակից լինել սրբոց քոց։

63 Դարձո զգերեալս ՚ի սա̅նյէ.
և զմեղօք վաճառեալս եգիպտա-
կան և խիստ տանջանացն՝ փըր-
կեա ՚ի բռնակալ չար սպասաւո-
րաց դիւացն. և յեղէգնակոխ
մեղացն հանցես՝ և արկցես զիս
յերկիրն աւետեաց։

64 Ընկղմեա տ̅ր զթշնամին իմ
որպէս զզօրութ̅ի փարաւոնի,

զի սպառնացեալ 'ի վերայ իմ
խորխատոյ դարձուցանելով զիս
յառաջին յանցանսն ընդ իշխա-
նութեամբ իւրով՝ ծառայել մեղաց
և անօրէնութեանց :

65 Օ՛երծո զիս տէր 'ի լերինս
քարանձաւի՝ կամ 'ի տեղի ա-
նապատի, ուր և ողորմութի քո
առաջնորդեսցէ ինձ, հանդի-
պիլ մեծի փառաց անուան քո.
տո՛ւր ինձ զթևս աղաւնակերպ
հոգւոյդ ըյթռչիլ և վերանալ
խառնիլ յերամս արդարոց :

66 Նմանեցո՛ զիս տր յօթևանս
արդարոց քոց, և զհանդիստ աշ-
խատութե սուրբ հարցն պար-
գևեա՛ ինձ. անտես արա զյան-
ցանս իմ, և դասաւորեալ պայ-
ծառացն ընդ սուրբս և ընդ սի-

րելիս անուան քո ։

67 Հաստատեա՛ Տր զխաղաղութի և զպայծառութի լուսոյ կենաց՝ անձին իմոյ • զի մի՛ խոտորեցիմ յաջ կամ յահեակ • և դատապարտիմ յաւուր դատաստեան քո՝ պահանջելով զյետին նաքարակիտն մինչ իսպառ ։

68 Մի՛ մերժեր զիս 'ի բազմագութ ողորմութեանց քոց • զապաւինեալս 'ի քեզ ամրացո՛՝ աներկիւղ պահելով յամ որոգայթից սանյի, զի մի՛ գերի վարեալ տանիցէ զմիտս իմ 'ի զբաղումն և 'ի չար ծառայութի ։

69 Տո՛ւր զիս Տր առնել զարդարութի, խօսել զճշմարտութի, սիրել զսրբութի և ատել զաղտեղութի, խոտորիլ 'ի չարեաց և

դնալ ՚ի ճանապարհս բարեաց ։
70 Ապրեցո՛ զիս տէր յորսողաց՝ որք դան ՚ի վերայ իմ ըմբռնել զիս ՚ի մեղս և ՚ի ծուլութի անժուժկալութե, մոռացուցմն առնել յանցանաց իմոց, և ո՛չ տալ յիշել զօր հատուցման, և զսպառնելի պատասխանին որ ասէ՝ երթա՛յք յինէն անիծեալք ՚ի հուրըն յաւիտենից ։
71 Կանգնեա՛ զիս տէր ՚ի գլորմանէ ․ և ՚ի բազմամեղ անդընդային խորութէ վերացո՛ և բարձրացո՛ թևօք հոգւոյդ սրբոյ ՚ի խնդրուածս հաճոյից, ՚ի նորոգումն և ՚ի լուսաւորութի մըտացս, ՚ի ջնջումն մեղացս, և ՚ի կատարումն սուրբ պատուիրանաց քոց ։

72 Խնդրեմ տէր զեղծեալ և զկորուսեալ քո պատկերս, որ 'ի մէջ աղբի և տղմի մեղաց փակեալ կամ. գի՛տ ածեալ աւելաւ շնորհի քո, և դի՛ր 'ի գանձանակն առաջին յորմէ անկաւ։

73 Ո՛վ տէր 'ի տեսութ̅ի հիւանդացեալ հոգւոյ իմոյ, դի՛ր զձեռն քո 'ի վերայ իմ. բժշկեա՛ ասելով՝ զօրացի՛ր ա՛ռ զմահիճս քո, և ե՛րթ 'ի տուն քո արդարութեան։

74 Ո՛վ տ̅ր 'ի խնդիր մոլորելոյս, որ յածեալ շրջիմ արտաքոյ հօտի պատուիրանաց քոց. գազանաբեկ եղեալ և քարավէժ մեղօք կառափնատիմ 'ի դիւաց. ըմբռնեա՛ և ա՛ծ 'ի փարախ հայրենի, և խառնեա՛ 'ի գառինս հօտի քո։

75 Հետևեա՛ որ ըղձետ ճողոպ-րելոյս ՚ի քէն, արտագայէ՛ս փու-թացիր. հա՛ս և ըմբռնեա՛ զա-պստամբեալս ՚ի ձայնէ կոչման քո, և դիր ՚ի բանդ կապանաց անխզելի սիրոյ քո։

76 Մի՛ թողուր զիս որ հեռա-նալ ՚ի սիրոյ պատուիրանաց քոց՝ և ՚ի վարուց առաքինութեանց. այլ յորդորեա՛ առաւելուլ յա̄մ գործս արդարութե̄, առանց մե-ղաց և առանց իրիք խափանուա-ծոց պաշտել զքեզ սրբութբ̄ և արդարութբ̄ առաջի քո զա̄մ աւուրս կենաց իմոց։

77 Մի՛ մատներ զիս որ ՚ի ցան-կութի̄ մեղաց, ՚ի քուն աչաց և ՚ի ցանկութի̄ մտաց. այլ պարսպեա՛ երկիւղիւ, և արբեցո՛ յամենա-

հնար չար դիւացն և յաշխար-
հական զբօսանաց ։

78 Մի՛ յապաղեր տալ ինձ ըղ փրկութի̄ հոգւոյ և զջերմութի̄ սիրոյ, զկերակրոյ պարկեշտութի̄ և զմարմնոյ ժուժկալութի̄, զար-տասուաց բղխումն, զանդադար աղօթս, զհնազանդութի̄ և զհամբերութիւն յուսոյ ։

79 Յաղթեա՛ տ̅ր՝ հակառակամարտին իմոյ, և զօրացո՛ զիս ընդդիմակաց լինել պատերազմողին ՚ի վերայ իմ. և զգեցո՛ ինձ ըղ զրահն հաւատոյ, պահօք և աղօթիւք սրբել զաղտս ցանկութե̄ և զխորհուրդս մարմնական, և առնուլ զշնորհս փրկական ։

80 Տո՛ւր ինձ տ̅ր տեղի ապաշխարութե̄, աշխատութե̄ հան-

գիտ, խաղաղութ հոգի և ար-
դարութ ճանապարհ, ամրութ
զէն, հաստատութ յոյս և պըն-
տութեան երկիւղ։

81 Անցո՛ զիս տէր ընդ անհուն
անցից մեղաց՝ խորաթուիչ ծո-
վահեղձ ցանկական կենցաղոյս.
և շնորհեա՛ ինձ լոյս աչացս և մը-
տացս տեսութի, հանդիստ կե-
նաց, հանդիպումն շնորհաց,
շաւիղս ճանապարհացն արդա-
րութեան։

82 Շնորհեա՛ ինձ տէր լու ա-
չացս, արտասուաց հոսումն,
մեղաց սուգ մտաց, սրտի եր-
կիւղ, ոսկերաց իմոց սարսափումն
և դողումն վն տանջանաց, կե-
նաց ճանապարհ և անդադար
պաղատանս։

83 Ուրախացո՛ զիս Տէր ՚ի պատ-
ուիրանաց պահպանութեան, որով
յայտնի ժուժկալութեան ՚ի մարտ
պատերազմի, բանսարկուին յաղ-
թութեան, ՚ի մարմնի մեռանիլ, և
պայծառանալ ՚ի հանդերձի:
84 Կեցո՛ զիս Տէր երկիւղիւ և
զղջմամբ, արտասուօք և հառա-
չանօք, սիրով և սրբութեամբ, շը-
նորհօք և ճշմարտութեամբ, գիտութեամբ
և ամենայն առաքինութեամբ:
85 Ջնջեա՛ Տէր զբազմութիւն մե-
ղաց իմոց, և թափեա՛ զմրուր
դառնութեան յանցանացս. և պա-
րարեա՛ զսիրտ իմ արբմամբ սուրբ
հոգւոյդ. և զփշաբեր մարմինս
իմ լցո՛ շնորհօք, զարդարեա՛ և ՚ի
պտղաբերութիւն փոխարկեա՛:
86 Սրբեցո՛ Տէր զշնորհս քո՝

զգութ և զողորմութի̅ քո 'ի պաշ-
տօնէայս քո · և տաճարացո՛ զիս
բնակարան լինիլ ամենա̅ք հոգ-
ւոյդ , մի՛ ևս ծառայել մեղաց
և ապականութե̅ց ։

87 Բժշկեա՛ զիս տ̅ր 'ի հպար-
տութե̅է և յամբարտաւանութե̅է ,
'ի սնափառութե̅է , 'ի մարդահա-
ճութե̅է և յոխակալութե̅է , 'ի նա-
խանձութե̅է և 'ի յատելութե̅է և յա̅մ
չարութենէ ։

88 Փրկեա՛ զիս տ̅ր 'ի մարդկային
գովեստից՝ 'ի փառաց և 'ի մեծա-
րանաց · լոյս կարծելով զխաւա-
րըս՝ համբաւեն 'ի վերայ իմ
բարի՝ զեղկելիս և զողորմելիս ։
Համբաւեն զիս առաքինի , և ես
եմ արտասուելի և անթիւ մե-
ղօք լի՛ · ծածկեա՛ զիս 'ի լուսոյ

սուտ գովուե̃ց եւ երանութե̃ց ,
զի ո՛չ գիտեն զմեղս իմ:

Երեւիմ սրբութբ̃ , եւ լի եմ
աղտեղութբ̃ · կերպարանիմ ա-
ռաքինութբ̃ , եւ կեամ անառա-
կութբ̃ · փայլիմ երկիւղածու-
թբ̃ , եւ վարիմ մարդահաճութբ̃ ·
Ճանաչեմ զճշմարտութի̃ , եւ խօ-
սիմ զստութի̃ · գիտեմ զարդա-
րութի̃ , եւ գործեմ զանօրէնութի̃:

89 Քաւեա՛ զիս տէր 'ի մեղաց
եւ 'ի քամբասանաց · եւ թո՛ղ ինձ
զանժուժկալուե̃ն եւ զծուլուե̃,
զորկորստուե̃ եւ զդատարկաբա-
նութեան , զցանկութի̃ աղտե-
ղութե̃ , զհայհոյութի̃ եւ զա̃մ
բիծս չարեաց:

90 Կացո՛ զիս տէր հաստատուն
անշարժ 'ի տեղի փորձանաց պա-

տերազմի , առանց երկիւղի քաջ
և պինդ հաւատով և յորդորա-
կան սիրով զօրավիգ լինիլ ընդ-
եկելոց դիւացն 'ի վերայ իմ .
զինեա՛ զիս ամրակուռ զինուք`
տալ պատերազմ և յաղթել թըշ-
նամւոյն հակառակամարտին , որ
կամի խոպառ զիս որսալ ։

91 Ո՛ ընկղմեալս տէր 'ի խորս
մեղաց հանցես և բերցես 'ի լոյս
պատուիրանաց քոց . և առ քեզ
կոչեսցես զհեռացեալս 'ի քէն ,
և թողցես զգործս իմ անառա-
կութէ . զապաւինեալս 'ի քեզ
մխիթարեսցես . զարձակեալս 'ի
կապոյ պատուիրանաց քոց` ըմ-
բռնեա՛ ընդ լուծ սիրոյ քո ։

92 Ո՛ գութ սիրոյ քո տէր միա-
ւորեա՛ յիս , և զարգելեալս 'ի

կապանաց բանտի՝ արձակեա՛ . և
խզեա՛ զկապանս մեղաց իմոց . ա-
ռաջնորդեա՛ ինձ 'ի ճանապարհ ,
և տեղի յարկից պատրաստեա՛ ,
և պսակեա՛ ընդ սրբս քո :
93 Հաղորդս արա՛ զիս Տր ած-
ային սիրոյ քո , սիրել զպատուի-
րանս քո և գտանել 'ի ճանապարհս
քո , չարչարիլ մինչև ցմահ վն
անուանդ քո , մտանել 'ի փառս
և դասիլ ընդ սրբս քո , և ուրա-
խանալ միշտ ընդ կամարարս քո :
94 Գթա՛ 'ի մեղուցեալ և յեղ-
կելի անձն իմ Տր . խափանեա՛
զանառակ ցանկութիս իմ . սրբեա՛
զաղտեղութի մեղաց , և քաւեա՛
զանօրէնութիս իմ . բժշկեա՛ ըղ-
վիրաւորեալ հոգիս , և առող-
ջացո՛ զհիւանդացեալ մարմինս

իմ. ցրուեա՛ զչարն յինէն, և
ժողովեա՛ զբարիս և լի՛ց զպա-
կասութիւնս իմ։

95 Առաջի քո անկանիմ և խնդ-
րեմ զթողութի՟ մեղաց իմոց.
զպաղատանս իմ ընկա՛լ, և քաւիչ
լէր յանցանաց իմոց. պայծառա-
ցո՛ և լուսաւորեա՛ զխորհուրդս
և զմիտս իմ. կարողացո՛ զմարմինս
իմ անդադար կալ ’ի փառաբա-
նութի՟ անուանդ քում ս՟բյ։

96 Օ՛ անկեալս մեղօք՝ կանգնեա՛
տ՟ր, և զխոցեալս ’ի թշնամւոյն
դեղապատեա՛. բժի՛շկ զցաւս մե-
ղաց, և վերացո՛ զկսկիծ յանցա-
նաց. յափշտակեա՛ ’ի դառն
դաՀճաց, և ազատեա՛ յանողորմ
տանջանացն. ’ի մարմնական յըղ-
փանաց հեռացո՛, և ’ի դասս ճըգ-

նաւորացն դասեցո՛ :

97 Լեր վերակացու և պահա-
պան անձին իմոյ՝ ով տ͞ր իմ յ͞ս.
պահեա՛ զիս 'ի դիւաց, և փրկեա՛
զիս 'ի մարդկային փորձանաց :
Հակառակողաց յաղթեա՛ և կացո՛
զիս 'ի մէջ պատերազմողաց՝ քաջ
և ընտիր լինիլ. գործակցեա՛ ինձ
լինիլ քաւարան մեղաց՝ և համբե-
րել վշտաց, առաքինաջան գոր-
ծովք հանդիպիլ քում ա͞ծային
շնորհացդ :

98 Վա՛յ ինձ տ͞ր՝ վա՛յ ինձ. զի
մեղօք կործանեցայ, և մտօք ի-
մովք աղտեղեցայ. 'ի բարեաց
ունայնացայ, և 'ի սիրոյ ցամա-
քեցայ. 'ի լուսոյ խաւարեցայ, և
'ի գնալոյ դադարեցայ : Ո՛չ ու-
նիմ աչս լալոյ և արտասուաց,

Տփխիմ տարակուսեալ՝ զի յոյս և
ակն բարեաց ոչ ունիմ։

99 Կանգնեա՛ տէր զտարաբեր-
եալ անձն իմ՝ որ լի եմ մեղօք
և անթիւ յանցանօք . և խարշ-
եալ և տրոհեալ եմ ամ̃ անդա-
մօքս՝ յոտից մինչև ցգլուխս ա-
պականեալ և չիք հնար բժշ-
կութե̃ , եթէ ոչ ՚ի քէն տր̃ իմ
յս̃ . խոնարհեա՛ առ փրկութ-
եանս դեղատուութբ̃ , և մի՛ դար-
ձիր ՚ի չարահոտ ախտացելոյս ։

100 Հեռացո՛ տր̃ զբերան իմ ՚ի
բամբասելոյ և զլեզու իմ ՚ի չար
խօսելոյ , զականջս իմ ՚ի չար
լուր լսելոյ և զձեռս իմ ՚ի յա-
փշտակելոյ , և զոտս իմ ՚ի յա-
նառակ գնացս երթալոյ . և զա-
մենայն անդամս իմ զգաստացո՛ ,

մի՛շտ զհաճոյս քո կատարել։
101 Մ`եղայ քեզ տ̃ր մեղայ, զի
յանցեայ զպատուիրանաւ քով.
'ի լուսոյ կենաց ելայ, և մտայ 'ի
խաւար մեղաց ցանկանալով աղ-
տեղութեց։ Ի սիրոյ քո հեռա-
ցայ՝ ըմբռնեցայ 'ի չարէն, և ե-
ղէ որդի կորստեան. ողորմեա՛
ինձ բազմամեղիս բարերար՝ զի
դու միա՛յն ես մարդասէր։
102 'Ի քեզ տ̃ր ապաւինիմ՝ որ
քաւարան ես մեղաւորաց և փա-
խուցելոյս դարան, արա՛ փախըս-
տական զթշնամին իմ։ Օգնական
զա՛յլ ոք ո՛չ ունիմ, բայց զքեզ
միայն ունիմ պահապան անձին
իմոյ. 'ի վտանգից փրկեա՛, 'ի յո-
րոգայթից ապրեցո՛, և արժանի
արա՛ զիս լինիլ որդի յաւիտենին։

103 Ողորմեա՛ ինձ Տէր կենաց և
քաւիչ մեղաց, կատարիչ խըն-
դրուածոց և արձակիչ կապե-
լոց. բաշխօղ պարգևաց և տուիչ
ամենայն շնորհաց ։

104 Լուր Տէր զաղաչանս իմ, և
ընկա՛լ զպաղատանս իմ. քաւեա՛
զյանցանս իմ, և կատարեա՛ ըզ
խնդրուածս իմ. արձակեա՛ զկա
պանս իմ, և բժշկեա՛ զհոգի իմ.
առողջացո՛ զմարմինս իմ, և ուղ-
ղեա՛ զգնացս իմ. փութացո՛ զիս
ժամանել յօթևանս սրբոց քոց ։

105 Հալածեա՛ տէր զբազում
ախտաժետութիւնս իմ, զցաւս 'ի
մարմնոյս՝ և զաղտ 'ի հոգւոյս,
զքուն 'ի գլխոյս՝ և զյագումն
որկորոց. Պահեա՛ զխորհուրդս
իմ անզբաղ, զսիրտ իմ սուրբ՝ և

զմիտս իմ լուսաւոր, զցանկու-
թ՟իս՝ առ քեզ, և զյօժարութ՟իս՝
յաղօթս 'ի տուէ և 'ի գիշերի:

106 Բղխեա՛ տ՟ր 'ի գլուխս աղ-
բիւր վտակաց, և զանդս մտաց
իմոց առոգեա՛. զաղտ յանցանաց
իմոց լուա՛, և սրբեա՛ զթարախ
վիրաց իմոց. զփուշ մեղաց իմոց
խլեա՛, և տնկեա՛ զբոյս կենաց:
Աճեցո՛ տէր զարդարութ՟ի, և
նուաստացո՛ զանօրէնութ՟ի. մեռո՛
զմարմնոյ ցանկութ՟ի, և նորոգեա՛
զհոգւոյս կենդանութ՟ի:

107 Կոչեմ տէր զմեղուցեալ
անձն իմ 'ի քեզ, զի մերձենալ
առ քեզ ո՛չ իշխեմ. պատկառիմ
յամօթոյ, և զարհուրիմ 'ի գոր-
ծոց իմոց. ո՛չ ունիմ առ քեզ
համարձակութ՟ի, զի ես ինձէն

եմ կորուսեալ։ Ի ս̅րբ պատուի-
րանաց քոց հեռացայ, և մերկա-
ցայ ՚ի փառաց քոց. այլ դու տ̅ր
գթած յիս և ողորմած, զի ստեղծ-
ուած եմ անարատ ձեռաց քոց։
108 Ո՛չ իշխեմ տէր անյոյս լի-
նիլ, զի ողորմած ես գթած. և
փառս անճառ խոստացար դար-
ձելոց մեղաւորաց. այլ ես զար-
հուրիմ և դողամ, և երկնչիմ ՚ի
բազում և յանթիւ մեղաց իմոց.
զի պատրեալ խաբեցայ յորսո-
ղէն. և արդ զի՞նչ լինիմ եղկելիս՝
որ տարակուսեալ եմ ՚ի կենաց։
109 Արա՛ զիս տէր ՚ի սուգ և
յարտասուս վ̅ն մեղաց իմոց. զի
ծանրացեալ եմ անօրէնութ̅ե բե-
ռամբ՝ և յագեալ աղտեղի խոր-
հրդով. շա՛տ ներեցեր ինձ զի

ոչ խրատեցեր զիս ՚ի մարմնի ·
որդ սարսեալ դողամ, թէ ոչ
մնան ինձ այպխոխս չարէք ։

Աղաչեմ բարերար տէր՝ մի՛
կոչեր զիս յատենի, և տանջա-
նաց մի՛ մատներ զիս · այլ փըր-
կեա՛ ՚ի հրոյ գեհեննին, և՚ի վտան-
գիցն ապրեցո և ողորմեա՛ ինձ ·
զի դու միա՛յն ես մարդասէր ։
110 Վա՛յ ինձ տր՝ զի ծփանք
տարակուսանաց պատեն զիս, և
զմիտս իմ խռովեն · զոր աղօ-
թեմ ոչ գիտեմ ։ Սաղմոսեմ և
ոչ իմանամ · չրթունք իմ բար-
բառի, և միտք իմ ձողոպրեալ
յածի այսր և անդր՝ և զկայու-
մըն ոչ ունի ։

Եւ կամիմ զի իցէ անդ՝ բայց
ոչ դադարէ · ոչ տեսանի որդ-

եօք և ո՛չ ըմբռնի․ ղուր աշխատիմ և ո՛չ ինչ օգտիմ․ ոպ՟ ձայն հնչեալ պղնձի և ծնծղայի՝ թափուր և ունայն դատիմ․ և անպտուղ գտանիմ յամ՟ բարեաց։

111 Ընկա՛լ տ՟ր զմոլորեալս որ փախուցեալ կամ ՚ի լերինս, ոպ՟ ծառայ չար ՚ի տ՟նէ հալածեալ վասն մեղաց։ Եւ ՚ի սուրբ եղբարց հրաժարեալ եմ, ՚ի սուրբ պաշտամանց հեռացեալ․ զի սիրօղ էի մեղաց՝ և նախատինք կրրօնաւորաց, անյագ ՚ի մեղաց և ՚ի զրկանաց։

Անգութ էի աղքատաց, և հակառակ սպասաւորաց․ անողորմ էի հիւանդաց, և անմխիթար աշխատողաց․ չէի իսկ արժանի կալ ՚ի մէջ ձգնաւորաց։

112 Հանգո՛ տ՟ր զշնորհս Հոգ-
ւոյդ ս՟բյ ՚ի վերայ իմ, որ միայն
եմ ՚ի պատերազմի առանց օգ-
նականի։ Սրբեա՛ տէր զտաճար
հոգւոյ իմոյ, և առ իս լեր ընդ-
երեկոյս։ Բա՛ց զաչս հոգւոյ ի-
մոյ, և լուսաւորեա՛ զմիտս և ըզ-
խորհուրդս իմ։

Տո՛ւր ինձ զօրութի՟ տէր իմ
յս՟, և ընկա՛լ զօրհնաբանութի՟
բերանոյ իմոյ։ Ի խոր քնոյ գի-
շերոյ զարթո՛ զիս գոհանալ և
օրհնել զքեզ որով զմեղս իմ
քաւեցից։ Շնորհեա՛ ինձ սուգ
և արտասուս լալոյ և սգալոյ, և
անդադար աղօթելոյ առաջի քո։

113 Դարձո՛ տ՟ր զդատապար-
տօղն իմ որ յանդգնի ՚ի վերայ՝
մարտ եդեալ ընդ իս ցանկութե՟

և անժուժկալութիւն, ծուլութիւն
և որկորստութիւն, փառասիրութիւն
և մարդահաճութիւն, բարկութիւն
և սրտմտութիւն, ատելութիւն և չա-
րաչար հայհոյութիւն, սնափա-
ռութիւն և սնապարծութիւն, հը-
պարտութիւն և ամբարտաւանութիւն,
բանիւք և գործովք և խորհր-
դովք զօրաժողով լինիլ 'ի վերայ իմ.
և ընկղմեն զիս 'ի խորս չարեաց:
114 Սփռեա՛ տէր զշնորհս քո 'ի
վերայ մասանց անդամոց իմոց.
լցո՛ տէր զմարմին իմ արիութիւն
և ժուժկալութիւն, և զհոգիս իմ`
երկիւղիւ և դողութիւն. զսիրտ
իմ սիրով և արդարութիւն քո,
և զմիտս իմ լուսով և իմաստութիւն
քո. զխորհուրդս իմ հանճարով
գիտութեան քո, և զոտս իմ գնալ

՚ի շաւիղս արդարութե՟, և զբերան
իմ անդադար սաղմոսել քեզ գո-
հութե՟ և օրհնութե՟. զաչս իմ
յորդաբուղխ արտասուօք, և
զհոտոտելիս իմ հոտոտել զհոտ
գիտութեան ՚ի կեանս. զլսելիս
իմ լսելով զձայնն աւետեաց որ
ասէ, թողեա՛լ լիցին քեզ ամե-
նայն մեղք քո։

115 Մ՝ինչև յե՛րբ անսաս տէր
չար գործողին, որ ո՛չ յագի ի-
մով կորստեամբ. այլ հանապազ
սկիզբն առնէ չարեաց, և ՚ի բաց
կորզեալ խափանէ զիս ՚ի բար-
եաց և յառաքինութե՟ց. և հե-
ռացուցանէ զիս ՚ի սրբութե՟ց,
և ՚ի յաւիտենից կենաց արտաքս
հանէ զիս։

Խաւարեցուցանէ զլուսաւո-

րութի աչացս՛, և ապականելով գերէ զմիտս իմ. և վարէ զիս 'ի չար ծառայութի յանցանաց, և 'ի ձեռս անօրէն դաշնացն մատնէ զիս. և տանի 'ի տեղի չարչարանաց, և արկանէ 'ի բանտ կապանաց մահու. կացուցանէ 'ի մէջ խաւարասէր սպասաւորաց, և 'ի տոռունս մեղաց կապէ զիս. և արդ ես եղկելիս զի՞նչ լինիցիմ, եթէ ոչ դու տէր օգնես ինձ։

116 Տես տէր զլալիս և զողբալիս, զպաղատելիս և զեղկելիս. ինձ ողորմեա՛ անօրինելոյս. և շնորհեա՛ ինձ յորդ արտասուս 'ի գիշերի, և զնշոյլ շնորհաց քոց յառաւօտի։ Բա՛ց զխաւարեալ աչս սրտի իմոյ, և բժշկեա՛ զհի-

ւանդացեալ հոգիս իմ. ընկալ
զդարձ մեղաւորիս, և մի՛ բար-
կանար բազմամեղիս Տր̄ իմ Յս̄.
և քանզի անթիւ ունիմ զչարիս՝
ջնջեա յինէն, և տուր ինձ զշը-
նորհս բարեաց։

117 Համարձակիմ Տր̄ աղօթել
առ քեզ, խնդրեմ և ոչ իմանամ.
զօգտակարն հոգւոյս յայտնեա
ինձ ողորմած տէր՝ զկամս բա-
րիս, և ուսո ինձ զպատուիրանս
քո։ Զբարիս՝ զոր ոչ խընդ-
րեմ և իմանամ, Տր̄ ինձ տուր.
և եթէ ոչ գործեմ զբարիս, բա-
րի՛ արա ինձ տէր. և եթէ ոչ
խնդրեմ զողորմութի̄, ողորմութի̄
շնորհեա ինձ տէր, և զհեռաց-
եալս առ քեզ կոչեա. և եթէ
ոչ կամիմ, բռնաւորեա և՚ի

քեզ կորզեա՛ ։

Եւ եթէ ոչ կամիմ, դարձո՛ զիս. և եթէ ըմբռնիմ յուսմեքէ, զերծո՛ զիս. եթէ յերկրաւորս զբաղեցայ, 'ի խորհուրդս հոգևորս զբաղեցո՛ զիս. եթէ այսր և անդր գնալ ցնդիմ, մի՛ թողուր զիս մինչև ըմբռնեալ տարցես 'ի տեղի յարկի փառաց քոց ։

118 Ո՛վ հայր ո̃ր իմ յեղկեալ սիրտս և 'ի զազրասէր մարմինս, զի հող եմ և մոխիր. սիրեմ զերկրաւորս, և ոչ փափաքիմ նայել յերկնայինսն. այլ միշտ հեշտանամ 'ի չարիս, և ոչ տեսանեմ զանվախճան փառսն։ Եւ ոչ յիշեմ զառաջին ո̃բ հարսն զերանելիսն, այլ 'ի տիղմն աշխարհիս

թաւալիմ. և ոչ մաքրեալ վերա-
նամ դասիլ ընդ առաքինիսն:

Եւ զի մոռանամ զերկիւղ դա-
տաստանին, և ոչ դողամ յահա-
գին դատն տանջանացն՝ որ կայ
պահեալ մեղաւորաց. և ես ծու-
լանամ անհոգ լինելով 'ի փըր-
կութենէ կենաց, շնորհեա՛ ինձ
տէր սուգ և կոծ անհանգիստ՝ և
արտասուս ապաշաւանաց:

119 Մի՛ յանդիմաներ զիս տէր
յաւուրն մեծի ահեղին, և մի՛
յատենի հրապարակին կացու-
ցաներ զիս ամօթալի. և 'ի տեղի
ատենին մի՛ խայտառակեր զիս,
և մի կշտամբեր յատեան դատաս
տանին. և մի՛ թողուր ինձ զոչ
գիտեմն լսել, և զահաւոր բար-
բառն ահաբեկ՝ որ ասէ, եր-

Թայք յինէն 'ի հուր գեհենին ։
Եւ մի' 'ի բաց մերժեր ընդ-
վատ և ընդ չար ծառայի • և 'ի
ձեռն անօրէն կապողի մի' մատ-
ներ զնա • և մի' տար կերակուր
որդանց Թունաւորաց 'ի մէջ
բորբոքեալ բոցոյ • և մի' արկա-
ներ զնա 'ի խաւար սառնամա-
նեացն տարտարոսին ։ Այլ փըր-
կեա' զնա 'ի սաստիկ կայծականց
հրոյ , 'ի բոցեղէն գետոց արշա-
ւանացն , 'ի սաստիկ լալագին և
խիստ տանջանացն և յողբոց տա-
րակուսանաց , 'ի կապկապելոյ ա-
տամանցն և'ի սարսռելի կսկծա-
նաց , 'ի տոչորմանէ խաւարային
բոցոյն և 'ի դժնդակ դառն ա-
ղետից խորովելոյն , 'ի բոցածա-
ւալ և'ի շրջապատ հրոյն և'ի կող-

կողաձայն և յանդադար վայրն
փրկեա՛ և ազատեա՛ զիս տէր։
120 Բազմացաւ տ՟ր անօրէնութի՟
՚ի վերայ իմ, իբրև զբեռն աղէ՛
կամ կապարի՝ բազո՛ւմ է ախտ
՚ի հոգիս իմ. և անխտիր եմ ՚ի
մեղս մարմնոյ, և զանազան չար-
եօք լցեալ եմ։ Բայց այլ ինչ
ունիմ վատթարագոյն՝ զանզեղ-
ջութի՟ մարմնոյ, որ քան զա՟մ չա-
րիս է դառնագոյն. և զի յաղօ-
թելն իմում՝ ձանձրանամ, և ՚ի
սաղմոսելն՝ ո՛չ իմանամ. ՚ի խընդ-
րել զերանութի՟՝ պղերգանամ,
և յերկիւղէ շնորհաց դատար-
կանամ. տկարանամ մարմնովս,
և արձան աղի սիրտ իմ լինի. և
ո՛չ ծագէ ՚ի ներս լոյսն անշիջա-
նելի, և յաւուրն չարի ո՛չ սար-

եալ դողամ։

121 Շնորհեա՛ ինձ տէր՝ եր-
կիւղ սրբութ͞ե և սգոյ. և յոր-
դորեա՛ առ իս աղբիւրս արտասու-
աց. թեթևացո՛ զծանրութ͞ի
բեռանց իմոց, և աճեցո՛ առ իս
սուրբ աղօթս։ Փութացի՛ր տ͞ր
և էկ 'ի խնդիր մոլորելոյս, որ
մերժեալ եմ 'ի վախճան կորստ-
եան՝ վ͞ս զի խաւարեցայ 'ի լու-
սոյ, և 'ի սիրոյ պատուիրանաց
քոց խափանեցայ. 'ի չար թշ-
նամւոյն յաղթեցայ, և նուաղե-
ցայ յերկիւղէ քումմէ։

Տապալեցայ 'ի չար խորհրդոց
չարին, և ցամաքեցայ 'ի շնորհաց
արտասուաց սիրոյ քո. խաբեցայ
յունայն բանից, և 'ի լուսաւո-
րութ͞ե մտաց մոլորեցայ. աղտե-

ղեցայ մեղօք , և զօր վախճանին մոռացայ ։

122 Տարակուսիմ անյոյս լինելովս՝ որ ոչ գոյ հնար ապաշխարութ̄ե . զի մարմնովս տկարացայ՝ պակասեալ 'ի զօրութ̄ե , և ծերացեալ նուաղեցայ ։ Սակայն 'ի քեզ ապաւինիմ տ̄ր յ̄ս՝ հասիր յօգնութ̄ի ծանրաբեռնեալ ընկղմելոյս . և ազատեա՛ զիս 'ի չարեաց , որ ազատիչդ ես 'ի յանցանաց ։

123 Ընկա՛լ տէր զդոյզն շաղփաղփ աղօթս իմ, որ կամ առաջի քո դատապարտեալ . այլ և ծոյլ 'ի զգաստութ̄ե՝ մոլորեալ եմ 'ի մտաց , և յերկիւղէ ունայնացեալ եմ։ Բերան իմ այլ ընդ-այլոյ բարբանջէ . աչք իմ պըշ-

նու, և միտք իմ զբաղնու․ ոչ
անզգօս աղօթեմ, և ոչ սրտի մը-
տօք խնդրեմ․ ոչ հաւատով առ
քեզ գոչեմ, և ոչ երկիւղիւ կար-
դամ․ ոչ արտասուօք հայցեմ, և
ոչ դողամ և սարսիմ վն աւուրն
պատասխանատուութեանց։

Եւ արդ տր՝ մի՛ անսար, այլ
փութապէս ա՛րկ յապաշխարութի
և'ի բովս մաքրութե հրոյ սրբեալ
և ազատեալ 'ի մեղաց։ Մեծա-
ջերմամբ եռացո՛ և'ի յորդոր ար-
տասուս և'ի պաղատանս և'ի խըն-
դրուածս․ և տպաւորեա՛ յիս
զառաջին լուսաւորութե կեր-
պարանն։

124 Ողորմեա՛ տէր մեղաւորիս՝
յանցաւորիս անթիւ բազմուք․
և դարձո՛ յապաշխարութի զգե-

րիս վտարանդեալ, և մո՛յծ զիս յարքունական փառսն։ Առաջնորդեա՛ ինձ զվերին ճանապարհըն գալ առ քեզ. զի եթէ դու ո՛չ առաջնորդեսցես ինձ՝ ես ո՛չ կարացից գալ. զի դու իսկ հրամայեցեր, եթէ ո՛չ ոք գայ առ իս՝ եթէ ոչ Հայր իմ ձգեսցէ զնա։

Եւ արդ Տ͞ր իմ գթած՝ մի՛ յիշեր զմեղս իմ յաճախս լրբութեանս՝ և զանց առներ 'ի ծառայէս քումմէ. մի՛ թողուր զիս մնալ 'ի նոյն չարիս՝ և 'ի կեանս աշխարհիս սպառիլ. այլ որպէս ընթացեալ զկնի ծառայի փախելոյ՝ այսպէս դարձուցանելով զիս՝ թողցես զյանցանս իմ, և արասցես հաղորդս ս͞րբց կամարարաց քոց։

125 Դարձո տր զցասումն բար-
կութեան քո յինէն, որ մեղօք
բազմօք իմովք տրտմեցուցի ըզ-
քեզ։ Ողորմեա՛ ապաստանեալս
՚ի քեն, և զանհնարին դիզեալ
կոյտս մեղաց իմոց ցրուեա՛. ընդ-
քաղցր լծոյ ծառայութեան քո
բևեռեա՛ զմիտս իմ։

126 Պարգևեա՛ ինձ տր յս՝ ըզ-
լալումն դաւթի և զողբումն Ե-
րեմիայի, զհառաչումն պետրոսի
և զյորդառատ վտակս արտասու-
աց կնոջն պոռնկի. զի նըստ-
եալ լացից անդադար ՚ի տուըն-
ջեան և ՚ի գիշերի, զի արժանի
եղէց սրբիլ ՚ի յաղտոյ և՛ ՚ի թարա
խոյ, և յորդնալից վիրաց զերծա
նիլ, և՛ ՚ի բազմաբեռն չարեաց թե-
թևանալ և դասիլ ընդ սրբս քո։

127 Ողորմիլ ինձ տ՟ր մի՛ յամե-
նար • զի առանց քո վաստակե-
լոյ յիս՝ ոչ երբէք գործի բա-
րի, և ոչ սերմանեալն յանդս
հոգւոյ իմոյ բուսանի • զի սերմն
բանի քո որ յիս սերմանեցաւ՝
՚ի չար Թշնամւոյն քաղեցաւ • և
բուսեալն՝ ոմն ՚ի տապոյ չորա-
ցաւ, և ոմն ՚ի մէջ փշոցն անկեալ
հեղձեալ ցամաքեցաւ • մշակե-
լով քո յիս տ՟ր՝ լծեա՛ տ՟ր զեր-
կուս այս եզանց որ յիս՝ ար-
տասուագոյչ ձայնիւ պաղատիլ
առ քեզ յա՛րաժամ, զի արժանի
գտայց ողորմութ՟ե քում:

128 Շնորհեա՛ տ՟ր զխաղաղութ՟ի
եկեղեցւոյ քում ս՟բյ, և ա՟մ հա-
ւատացելոց Թագաւորաց և իշ-
խանաց՝ զօրաց և զօրաւորաց ՚ի

Ճակատու պատերազմաց՝ յաղ-
թել անօրէն բռնաւորաց։

129 Ողորմեա՛ տ՟ր առաջնորդաց եկեղեցւոյ՝ հայրապետաց և վարդապետաց, երիցանց՝ սարկաւագաց՝ դպրաց՝ և ա՟մ ուխտի մանկանց եկեղեցւոյ առնել զիրաւունս և զարդարութի յա՟մ ժամ, հովուել զժողովուրդս ք՟ո, տըքնիլ վ՟ն հոգւոց ն՟ց, ասելով՝ ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետուր ցիս։

130 Ողորմեա՛ տ՟ր յ՟ս ք՟ս կարօտելոց և տարակուսելոց, որբոց և այրեաց, տնանկաց և տանց հաւատացելոց, կենդանեաց և ննջեցելոց, և որք ընծայաբերք են եկեղեցւոյ։ Աղքատաց՝ կերակրողաց՝ ողորմածաց՝ երկիւ-

ղածաց և հիւանդաց , նաւոր-
դաց և ճանապարհորդաց , խոս-
տովանողաց և ապաշխարողաց ,
և անդարձ մեղաւորաց ողորմեա՛
տէր , և դարձո՛ զնոսա յապաշ-
խարութիւն ։

131 Ողորմեա՛ տ̄ր եղբարց մե-
րոց կրօնաւորաց , և միանձանց
ճգնաւորաց · և որք յանձն ա-
ռարին զինքեանս յաղօթս մեր
յիշել , ողորմեա՛ բարերար և ըստ
իւրաքանչիւրոց պիտոյից՝ բաշխ-
եա՛ առատապէս զշնորհս հոգ-
ւոյդ ս̄բյ ’ի վերայ ամենեցուն
սոցա · և զարդարեա՛ և միացո՛ ’ի
սէր ա̄ծութե քո ։

132 Աղաչեմ տ̄ր յս̄՝ և անկա-
նիմ առաջի քո ս̄բ խաչին , բա-
րեխօսութ̄բ սորա զաղաչանս իմ

ընկա՛լ, և զխնդրուածս իմ կա-
տարեա՛. և զօրութի՟ սորա զօրացո՛
զիս ՚ի կոչմանս յոր կոչեցայ, և
՚ի պատուիրանս քո զոր ուսայ:

Տո՛ւր ինձ տ՟ր զսա՛ ՚ի զօրութի՟
և ՚ի ժուժկալութի՟՝ ՚ի զգաստութի՟
և յառողջութի՟՝ լինել պահապան
անձին իմոյ ՚ի տունջեան և ՚ի
գիշերի և յա՟մ ժամու, ՚ի նստել
և ՚ի յառնել, ՚ի գնալ և ՚ի դա-
դարիլ, ՚ի գործս և ՚ի վաստակս,
յաղօթել և ՚ի պահել, և զհաճոյս
կամաց քոց կատարել:

Ա՛յ եղիցի ինձ բերդ ամուր,
և աշտարակ հզօր երեսաց թըշ-
նամ՟ոյն. զարդարեա՛ զիս սովաւ
՚ի զարդ հոգեղինաց՝ և ՚ի լոյս ի-
մանալի: Եւ յաւուրն ահեղի
բարբառոյ գաբրիէլի՛ յերևիլ

սրբոյ խաչիդ՝ լուսաւորեա՛ ըզ-խաւարեալ հոգիս, վերանալ լուսով ընդ առաջ անմահ փե-սայիդ, խառնիլ յերամս հայ-րապետաց, և 'ի դասս մարտիրո-սացն, և 'ի գունդս հրեշտակաց:

133 Բարեխօսութե՟ սրբուհւոյ ա՟ծածնիդ և անարատ միշտ կու-սիդ, և յովհաննու կարապե-տին, ստեփաննոսի առաջին մար-տիրոսին, և ո՟բոյն գրիգորի լու-սաւորչին, և ա՟մ ո՟բոց վկայից քոց՝ լո՛ւր ինձ եղկելւոյս:

Եւ գործելոյս ձեռնտու լե՛ր, և մոլորելոյս առաջնորդեա՛. և 'ի խաւարէ հանցես զիս 'ի լոյս, և հոգւոյ իմոյ ազատութի՟ շը-նորհեա՛: Հաստատեա՛ 'ի սէր քո, և բևեռեա՛ յերկիւղ քո, զսա-

ճար հոգւոյ իմոյ մաքրեա՛, և առ իս օթևանեա՛ ։

Փակեա՛ զդուռն մեղաց իմոց, և պարսպեա՛ շուրջանակ յասոխէ իմմէ. և 'ի մարդոյ չարէ և յանիրաւէ փրկեա՛, և ազատեա՛ զիս առաքինութ̅բ. և պարգևեա՛ ինձ զանձառ երանութ̅ե քո։ Կենդանեաց մերոց ողորմեա՛, և զհոգիս ննջեցելոց մերոց պայծառացեալ լուսաւորեա՛ ։

134 Բարեխօս առ քեզ ունիմք զառաքեալսն և զմարգարէսն, և զա̅մ ս̅բ մարտիրոսսն, զհայրապետսն և զվարդապետսն ։ Լո՛ւր աղաչանաց նոցա, և ազատեա՛ զիս 'ի մեղաց իմոց. տնկեա՛ յիս հոգի շնորհաց, և յորդորեա՛ զիս բարիս գործել. 'ի ծուլանալն

իմում՝ բունաւորեա՛․ խափանեա՛ զիս 'ի չար գործոց, և սերմանեա՛ յիս պտուղ բարեաց։

Քաջալերեա՛ զիս 'ի նեղութե՟ իմում․ մխիթարեա՛ 'ի վշտի․ արժանի՛ արա զիս տէր իմ և ա՟ծ իմ յս՟ քս՟՝ լինիլ քեզ խաչակից մինչև ցմահ․ ո՟պ զի 'ի հեշտութե՟ց աշխարհիս հրաժարիցիմ․ և եղէց երանելեացն դասակից, և աւաղակին եղէց հաղորդ․ և 'ի դրախտին վայելեցից զկեանս անմահս։

135 Յաւուրն 'ի վախճանի՝ հրեշտակ բարի ինձ առաքեա՛, քաղցրութե՟բ աւանդել զհոգի իմ․ ընդ ուղիղ ճանապարհ առաջնորդեա՛, և զգազանս դարանակալ կործանեա՛․ անցո՛ զիս

անխռով ընդ օդս խաւարայի-
նըս, և զերծո՛ 'ի չար ժանից դա-
ղանին․ ապրեցո՛ և աներկիւղ
պահեա՛, և 'ի կայանս սրբոցն
հանգո՛՝ սպասել և ակն ունիլ
գալստեան քո։

136 Յորժամ գաս յերկնից ա-
հեղ փառօք և անթիւ դասիւք
հրեշտակօք, զարհուրեալ դողան
առ հասարակ տարերք ա̃մ՝ երկ-
նայինք և երկրայինքս․ յանկար-
ծել քո զօրութե̃դ՝ սարսին յա-
հեղ փառաց անմահ թագաւո-
րիդ և անճառ դատաստանիդ և
աններելի պատուհասիդ։

137 Յայնժամ աւուր և զիս ըն-
կա՛լ տ̃ր ընդ արդարս և ընդ կա-
տարեալս քո․ և կարգաւորեա՛
ընդ աջմէ դասուն, և պսակեա՛

ընդ մեզ քո • և շնորհեա ինձ ըղ-
կեանս յաւիտենից , և զանձառ
բարիս քո պարգևեա ինձ • և
քեզ փառք արարողիդ՝ և պար-
գևողիդ իմոյ բարեաց ։

138 Յիշեա տէր զհոգիս ննջե-
ջեցելոց մերոց յաւուր մեծի
քում գալստեանդ՝ յորժամ գաս
յերկնից անձառ փառօք , ահեղ
և սոսկալի զօրօք , հրանիւթ և
հողեղէն զուարթնօք ։ Ահաւոր
հուր առաջի քո ընթացեալ տա-
րածանի • կիզէ զներհինս՝ և հալէ
զբլուրս • և զարարածս ամ՟ առ-
հասարակ տապալէ ։

Յայնժամ աւուր ահեղին ողոր-
մեա՛ ինձ մարդասէր , զի գին
սուրբ արեան քո եմ ։ Յորժամ
զաղբիւրս ցամաքեցուցանես , և

զգնացս գետոց դադարեցուցանես, զծովու ջրոյն զանբաւուի̃ սպառեցուցանես, զլուսաւորս խաւարեցուցանես, փողն ահագին ընդ ախեղերս ա̃մ հնչի. և զմեռեալսն զա̃մ զարթուցանէ. և զաշխարհս ա̃մ դողացուցանէ. և արարածք ա̃մ յարուցեալ կան առաջի ա̃ծութե̃ քո:

Յայնժամ դնես զդատողական աթոռ քո, և ընդ քեզ բազմեցուցանես զերկոտասան առաքեալսն: Անաչառ դատաստանաւ դատես, և յամենեցուն արդարութ̃ի պահանջես. զկամարարս քո պատուես, և զապստամբեալսն 'ի ձայնէ կոչման քո՝ պատժես. և զարդարսն փառաւորես. զմարտիրոսսն և զս̃բ կու-

կայսն պսակես • զիմաստուն մբ̃
կուսանսն զարդարես • և յիմար
կուսանացն զառագաստին դու-
ռըն փակես, և ՚ի փառացն և յե-
րանութեցն հալածես • զօդիսն
քո ընտրես, և զայծիսն ՚ի քէն
՚ի բաց մերժես • և ՚ի գեհեանն
առաքես՝ ուր լալումն է աչաց,
և դառնագոյն կսկիծ ահեղ տան
ջանաց, և հրեղինաց չար որ-
թանց թունաւորաց կատողացն՝
կրճուումն ատամանց։

139 Արդ՝ գթա՛ և յիս յայն-
ժամ մա՛րդասէր տր̃ և բարերար
փրկիչդ իմ յս̃ քս̃ • և ողորմուբ̃
քով գթասցիս ՚ի հոգիս ննջե-
ցելոց մերոց՝ որք հաւատով ՚ի
քեզ ննջեցին, զորս յարուցեալ
կացուսցես առաջի ահաւոր քո

մեծի դատաստանին՝ յայն տիե-
զերական ահեղ հրապարակին ։

Յորժամ յայտնին գործք բարւոյ և չարի անթաքչելի 'ի մէջ ատենին , յայնժամ աւուր ահեղի թողութի՟ շնորհեա՛ յուսացելոց քոց ․ որք յանուն քո նը-ննջեցին յերկրի , զոր գնեցեր պատուական արեամբդ քո ։

Զնջեա՛ զձեռագիր մեր մկր-տելոցս 'ի քեզ ․ և թող զպարտիս յանցանաց մեր հաւատացելոց , զկամայից և զակամայից ․ ընդ աջմէ քումմէ դասեա՛ , և զերանական զձայնն 'ի լսելիս մեր հաւատացելոց աւետարանեա՛ ասելով՝ եկա՛յք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զյաւիտենից բարութեան ։

140 Տէր՝ տ՟ր իմ և ա՟ծ իմ յս՟ քս՟՝ բարերար ողորմած և մարդասէր՝ անոխակալ և անյիշաչար՝ ընկալ զաղօթս և զխնդրուածս իմ. ո՟պ պաղատիմ և հայցեմ ՚ի քէն վ՟ս իմ և վ՟ս ա՟մ հաւատացելոց, մի՛ դարձուցաներ զերեսս քո ՚ի ժտողէս. այլ խոնարհեա՛ յաղաչանս իմ, և լո՛ւր ինձ մարդասէր. և ցո՛յց յիս զողորմական քո մարդասիրութե՟դ զողորմութիւն, և խնայեա՛ ՚ի մեղուցեալ ծառայս քո։

Եւ կարգեա՛ զիս ընդ աջմէ դասուն. և մի՛ կացուցաներ ՚ի ձախմէ ընդ ուլսն՝ որք զայրացուցին զքեզ. և մի՛ պահանջեր յինէն զանհամար պարտիս յանցանաց իմոց։ Եւ մի՛ դատապար-

տեր զմեղաւորս յայնժամ. և մի
յայտնեսցին ծածուկք գործք
ամբարշտութե՜ իմոյ յանցանաց
յանաչառ ատենին՝ հրեշտակացն
տեսանողաց և հրեշտակապետա-
ցըն և ա՟մ սրբոց քոց սիրողաց.
այլ յաղթեալ 'ի քումմէ մար-
դասիրութե՜դ՝ արասցես այցե-
լութիւն մեղուցեալ ծառայիս
քո. և մի ըստ չար գործոց իմոց
հատուսցես ինձ։

Եւ մի հրամայեր կապեալ ոտ-
իւք և ձեռօք հանել 'ի խաւարն
արտաքին, ուր լալ աչաց է և կըր
ճտել ատամանց. այլ ըստ քում
գթութե՜դ և բարերարութե՜դ
և անյիշարութեանդ՝ ողորմեա՛
ինձ բազմամեղիս։

Յայնժամ ամուր զերծո՛ զիս յա-

մօթոյն յաւիտենից . և փրկեա՛ զիս յանվախճան տանջանացն . արբեցո՛ զիս յաններելի պատուհասիցն, և բա՛ց ինձ զդուռն ողորմութե̃ քո . և մի՛ փակեր ըզդուռն արքայութե̃ տ̃ր իմ տ̃ր՝ ա̃ծ իմ ա̃ծ՝ յիսուս ք̃ս ։

Արժանի՛ արա զիս զանարժանս յաւուրն յայնմիկ երանութեանց , և անապականութե̃ պարգևաց լուսոյ , և անսպառ յաւիտենից ուրախութե̃ց , և բարեաց հատուցմանց ս̃բցն և արդարոցն , և զփառս երանելեացն վայելել միշտ ։ Զի մտից արժանապէս յառագաստ անմահ փեսայիդ . և ժառանգեցից զանսպառ բարիսն ընդ ա̃մ ս̃բս ք̃ո՝ մաքուր և յստակ և սուրբ

սրտիւ՝ համարձակ երեսօք ։

Անհատ տեսից զքեզ ընդ հը-
րեշտակս ․ և ընդ սուրբ սիրօղս
վայելեցից զանհաս զանճառելիդ
և զանեզր լոյս երրորդուե̅դ՝ գո-
հանալով ․ և զուգահաւասար ա-
րասցես ընդ ս̅բս քո յօրհնաբա-
նութիւնս միշտ արժանապէս ․
հանապազ ա̅ծային անստուեր
լուսով քո պայծառացո՛։ Եւ ան-
դադար երգով փառաւորեցից
զամենասուրբ երրորդութի̅դ ,
այժմ և յաւիտեանս յաւիտե-
նից , ամէն ։

Նորին դարձեալ աղօթք ասացեալ
առ տէր ա՟ծ ։

Տէ՛ր ա՟ծ զօրութեանց՝ աղաչեմ զքո բարերարութիւնդ . ժամեմ և հայցեմ 'ի քէն , տո՛ւր ինձ տապան ապրեցուցիչ որպէս Նոյին . ապրեցուցիչ ինձ 'ի հրեղէն ծովէն և յանդնդային հրահոսանացն , յանշէջ արգելանէն և յանհնարին վտանգիցն ։ Զի դու ես տ՟ր ա՟ծ՝ որ զբանդ ա՟ծային ծածկեցեր և 'ի ծառայական կերպս իջեր վ՟ն իմ . զլեղի 'ի քիմս առեր , և ապտակ 'ի ծնօտս ընկալար ։

Եւ այժմ աղաչեմ զքեզ՝ ազատեա՛ զիս 'ի դառն ծառայութենէն սատանայի . զի յորժամ զձեռս իմ 'ի վեր ունելով աղօ-

Թեմ, անօրէն սատանայ խաբէ և ունայն հանէ զիս 'ի յաղօթից իմոց։ Տո՛ւր ինձ ա̃ծ բերդ ամուր. և կործեա՛ զիս յառխուծուն որ հանապազ կամի կլանել զիս։ Զի ընդ պիտանիսն փառաւորեցից 'ի բարձունս ըզհայր և զորդի և զս̃բ հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նորին աղօթք՝ պէս պէս հայցուածովք։

Տէր յս̃ քս̃ երկնի և երկրի, իշխան կենաց և մահու, դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Քս̃ ա̃ծ յոյս և ա-

պաւէն հոգւոյս իմոյ՝ քեզ խո-
նարհեցուցանեմ զերկրպագու-
թիւնս և մատուցանեմ զփառա-
բանութեան մաղթանս ։ Լո՛ւր
պա՛րգևիչ հայցուածոց իմոց՝ որ
միա՛յնդ ես առանց մեղաց · որ
միա՛յնդ ես ս̃բ և 'ի ս̃բս հան-
գուցեալ · որ միա՛յնդ ես գթած
և ողորմած ։

Ողորմեա՛ ինձ ա̃ծ ըստ մեծի
ողորմութե̃ քում, և ըստ բազում
գթութե̃ քում քաւեա՛ զանօ-
րէնութիւնս իմ ։

Ստեղծիչ իմ ողորմեա՛ ինձ և
օրհնեա՛ զիս · երևեցո՛ զերեսս
քո առ իս և հաշտեա՛ ընդ իս ։
Ապրեցուցի՛չ իմ դա՛րձ առ իս և
երևեցո՛ զերեսս քո, և յիշեա՛ զիս
յարքայութե̃ քում ։ Դա՛րձ առ իս

ա՟ծ· փրկիչ իմ, և դարձո՛ զսրտամտութիւնս քո յինէն ։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ • և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն ։ Մի՛ բարկութե՟բ քո խրատեր զիս • և մի՛ սրտմտութե՟բ քով յանդիմաներ զիս ։ Մի՛ յաւիտեան բարկանար ինձ • և մի՛ յիշեր զչարիս իմ • և մի՛ պարտաւորեր զիս ըստ իմում անօրէնութեանս ։

Մի՛ իսպառ բարկանար ինձ • և մի՛ յաւիտեան պահեր ոխս ։ Մի՛ ըստ մեղաց իմոց առներ • և մի՛ ըստ անօրէնութեանս իմում հատուցաներ ինձ ։ Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց • և մի՛ խնդրեր զդ-իր յանցանաց իմոց, և մի՛ դատապարտեր զիս •

զի ես ինձէն գիտեմ որ անուղղայ եմ և՛ յանցաւոր ՚ի մանկութէ, և անպատասխանի եմ յա̃մի։

Այլ դու դատաւոր հզօր և անոխակալ, որ զյանցանսն թողեր անառակ որդւոյն՝ թո՛ղ և ինձ զպարտիս մեղուցեալ և անօրինեալ քո ծառայիս։ Քանզի քո առատ քաղցրութի̃ յայնժամ երևեսցի՝ յորժամ ինձ ողորմիս, որ չե՛մ արժանի ողորմութեան քում. յորժամ ցիս ցուցանես զերկայնմտութի̃ քո, որ արժանի եմ բիւրուց տանջանաց. զի զա̃մ աւուրս իմ անառակութե̃ անցուցի, և ո՛չ կացի ՚ի հրամանի քում։

Արդ՝ քաղցրացի՛ր ինձ բա՛րի և քաղցր թագաւոր. և հաշտեա՛ց

ընդ բազմամեղիս • և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն • և մի՛ խոտորիր բարկութբ ՚ի ծառայէ քումմէ ։

Մ՚ի հայիր յանհնազանդութիս իմ և ՚ի պղերգութիս ։ Մի՛ անարգեր զիս և մի՛ թողուր զիս • և մի՛ ընդ վայր հարկաներ զիս • զի թէպէտ ես զատաճար հոգւոյդ սրբոյ ապականեցի իմով ծուլութբս և անառակ գնացիւքս, այլ դու գթա՛ յիս սրտեղծիչ իմ ողորմած և անյիշաչար • և մի՛ ապականեր զհոգի իմ գեհենաժառանգ այրմամբ յաւիտենականաւ ։

Ո՛վ գթացեալ մարդասիրապէս՝ երկայնամիտ լեր առ իս , և ներեա՛ յանցանաց իմոց • Ե-

շնորհեա՛ ինձ ժամանակ ապաշխարութե՟ և զղջման արտասուաց. և տո՛ւր իմաստութի՟ խորհիլ զօրէնս քո 'ի տուէ և 'ի գիշերի, գործել զբարի և առնել զարդարութի՟ առաջի երեսաց քոց։

Հանձնառնամ առ քեզ տ՟ր զանձս իմ բոլորով սրտիւ իմով. կարդամ առ քեզ ք՟ս ա՟ծ միածին որդի ա՟յ՝ կերպարան անեղին և համագոյ ս՟բ հոգւոյն։ Որ յաղթեալ 'ի մարդասիրութե՟դ քումմէ, կամաւ խոնարհեցար յանձառ փառացդ և առեր ըղձառայի կերպարանս. և անպարտականդ՝ յաղագս դատապարտութե՟ մերոյ համբերեցեր մինչև զչարչարանս խաչի և մահու յանձն առեր վ՟ս փրկութե՟

ստեղծուածոց քոց։

Արդ՝ որ զայնպիսի սէր ունիս առ ազգս մարդկան, և կամիս զի ամենայն մարդ կեցցէ և ՚ի գիտութի՜ ճշմարտութե՜ եկեսցէ, գթա՛ և յիս ՚ի բազմամեղս գըթած և մարդասէր տէ՜ր. և կամեա՛ց ընդ իմ փրկութե՜ն և արա՛ ինձ ողորմութի՜ եղկելւոյս և թըշուառականիս, որ առաւել վիրաւորեալ եմ և ողորմելի քան զամենայն մարդիկ։

Ոչ ի ո՛չ և մի օր սիրեցի ըզքեզ ՚ի բոլոր սրտէ իմմէ. և ո՛չ մի ժամ յո՜մ զօրութէ՜ իմմէ պահեցի զպատուիրանս քո. այլ պղերգութե՜բ և զբօսանօք անցուցի զաւուրս իմ. և աղտեղի խորհրդովք անցուցի զամենայն

կամս իմ։ Աւուրք իմ պակասեցան, և անօրէնութիւնք իմ բարձրացան. և ոչ գոյ ինձ յոյս փրկութեան և տեղի ապաւինի. բայց միայն յուսացեալ եմ ՚ի քո բարերարութիւն, և ապաւինեալ յառատ ողորմութիւն։

Եւ արդ՝ անկեալ բղխմամբ արտասուաց աղաչեմ զքեզ. պաղատիմ մինչև եմ կորուսեալ, և մինչև է ժամանակ դարձի իմոյ հասեալ. շնորհեա ինձ ապաշխարութի̃, և յառաջ քան զվախճան արձակեա զիս ՚ի կապանաց մեղաց իմոց, և անտես արա զանթիւ անօրէնութ̃իս իմ։

Որ ա̃մ բարութ̃եց ես տ̃ր, և իշխանդ ես թողուլ զմեղս՝ ծածկեա զա̃մ անօրէնու̃իս իմ

քոյով մեծութեդ • և մխիթարեա
զվշտանկեալ և զտարակուսեալ
հոգի իմ։ Եւ արժանաւորեա
զիս յայսմ հետէ ըստ կամաց քոց
քաղաքավարել զայլ ևս պանդըխ-
տութե իմոյ ժամանակս • եթէ
չկամիմ , բռնադատեա զիս • և
մի՛ թողուր ՚ի կամս անձին իմոյ ,
մինչև տարեալ հասուցես յօ-
թևանս արքայութեդ երկնից։

Լուր տր աղօթից անարժան
ծառայիս քո , և պաղատանաց ի-
մոց ունկնդիր։ Որ ասացեր թէ՝
հայցեցէք և գտջիք • բախեցէք
և բացցի ձեզ։ Եւ այժմ բա՛ց
ինձ տր զդուռն ողորմութե՝ որ
ողբալով կարդամ առ քեզ • և
մի՛ անտես առներ զաղաչանս մե-
ղուցեալ անձին իմոյ • որ ոչ ե-

կեր կոչել զարդարս, այլ զմե-
ղաւորս յապաշխարութիւն։

Արդ՝ խոնարհեալ անձամբ՝ բեկեալ սրտիւ՝ և ամօթալից երեսօք անկանիմ առաջի քո. չեմ արժանի կոչիլ որդի քո՝ վ̅ն ապականեալ վարուց իմոց, և ոչ անուանել զանուն քո գարշ և աղտեղի բերանով իմով։ Այլ համարձակիմ ՚ի գթութի̅ քո. զի գիտեմ զքեզ քաղցր և անոխակալ՝ բազմախնամ և երկայնամիտ առ արարածս քո. և յաղագս այսորիկ ժտելով պաղատիմ առ քեզ։ Եւ յառաջ քան զդնիլ ատենին՝ աղաչեմ. և նախ քան զփակիլ դրանն ապաշխարութեան և հատանիլ անդարձ վճռոյն՝ զարտասուս իմ ընկա-

նեմ առաջի անոխակալ գթու-
թեանդ քո ողորմած տէր , եր-
կայնամիտ քաղցր և անյիշաչար:

Մի՛ ընդ քանքարաթաղացն
դատապարտեր զիս · և մի՛ ընդ
յիմար կուսանսն փակեր ինձ
զդուռն արքայութե՟ քո: Մի՛
ընդ չար և վատ ծառայիցն զիս
ըծակցեր · և մի՛ ընդ հերձուա-
ծողսն դներ զբաժին իմ: Մի՛
ընդ պոռնիկսն և ընդ չարագործ-
սըն կորուսաներ զիս · և մի՛ ընդ
ախտաւորսն և ընդ շաղախեալսն
հոգւով հաներ զիս 'ի կենաց:

Այլ զերծո՛ զիս յանզերծ-
անջանացն , և ապրեցո՛ յանհան
գիստ ալէկոծութե՟ցն: Փրկեա՛
անմահ 'ի մահուանէ , և ազատեա՛
'ի յաւիտենական ամօթոյն · զեր-

Տո՛ 'ի միշտ լալոյն և 'ի հանապա-
զորդ ողբալոյն ։

Մի՛ մերժեր զիս 'ի քո դա-
տուցն , և մի՛ տարագիր առներ
յերանաւէտ կենացն ։ Մի՛ ան-
բաժին հաներ զիս 'ի հայրենի
ժառանգութէ̄ն , և մի՛ զրկեր
զիս յերկնաւոր հարսանեացն ։
Մի՛ կարօտ պահեր զիս 'ի քո ան-
ճառելի տեսուէ̄դ · այլ շնորհեա՛
ինձ ընդ արժանաւորսն , և ընդ
կատարեալ ոգիսն՝ վերանալ լու-
սեղէն ամպօք ընդ առաջ քո յօ-
դըս , և պարզերես և աջալրջու-
թեամբ կալ առաջի քո ։

Յուր̄ քո փառաւորեալ հը-
զօր և ահեղ թագաւորութե̄դ ,
մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ
ծառայիս քո · և մի՛ հատուցա-

ներ ինձ ըստ իմում անօրէնութեանս . և մի՛ ամաչեցուցաներ զիս առաջի անթիւ և աՀաւոր բանակաց քոց ։

ԱՅԼ ողորմեա՛ ինձ՝ զի ոչ ոք է Հակառակ քեզ . և պարգևեա՛ ինձ զարքայութ͞իդ ։ Ընդ ս͞րբս քո դասեա՛ , և ընդ արդարսն պսակեա՛ . ընդ սիրելիս քո օրՀնեա՛ , և ընդ կամարարս կամաց քոց 'ի յարազուարճ ուրախութիւնն ուրախացո՛ ։

ԵՒ առատապարգև փառօքդ փառաւորեա՛ զիս տ͞ր 'ի լուսեղէն երամս արդարոց՝ ընդ Նոսին Հանգչիլ 'ի վերինդ երուսաղէմ յանստուեր և յ͞ծակեաց ուրախութ͞իդ ։ Զի ընդ Նոսին Համաձայնեալ փառաւորեցից զա-

Ամենասուրբ Երրորդութեանդ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Աղօթք՝ յորժամ յորոգայթ անկանի ոք , ասացեալ է սրբոյն Գրիգորի մե-րոյ լուսաւորչին ։

Օրհնեա՛լ է մարդասիրութիւնդ քո տ̄՛ր իմ և փրկիչ յս̄ քս̄ , ընդէր լքանես զիս · դու միայն ես առանց մեղաց , և անուն քո զանոխակալութի̄ և զմարդասիրութի̄ ցուցանէ · գթա՛ յիս՝ վ̄ն զի դու ես միայն մարդասէր ։

Տարեցո՛ զիս զանկեալս ՚ի մե-ղս · զի դու ես միայն առանց մեղաց ։ Հա՛ն զիս ՚ի տղմո՛յ անօ-

ըէնութե իմոյ, զի մի՛ ընկղմեցայց յաւիտեանս յաւիտենից։ Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց. քանզի ահա՛ իբրև զառիւծ գոչէ և մռնչէ կամելով կլանել զիս։

Արդ տէ՛ր իմ փայլատակեա՛ զփայլատակունս քո և կործանեա՛ զզօրութի նց. երկիցեն և խաւարեսցին յերեսաց քոց. քանզի անկա՛ր է և ո՛չ ունի զօրութիւն կալ առաջի քո, և ո՛չ առաջի երեսաց սիրողաց քոց։ Տեսանէ զզօրութի նշանի խաչի քո տր՝ և զարհուրի. և ամաչելով ՚ի բաց հեռանայ յայնցանէ՝ որք կարդան առ քեզ։

Այժմ տ՛ր կեցո՛ և ապրեցո՛ զիս, վ՛ն զի ՚ի քեզ ապաւինեցայ. հա՛ն ՚ի նեղութե զանձն

իմ, զի մի՛ իսպառ կորուսցէ զիս
նենգաւորն՝ որ մարտնչի ընդ իս
ծածուկ հնարիւք։ Որ խորհըր
դոց ես տէր, և քննես զսիրտս և
զերիկամունս, սրբեա՛ զսիրտ իմ
և զխորհուրդս 'ի զազիր և 'ի
պիղծ խորհրդոց․ զի մի՛ իսպառ
կորեայց 'ի յաւիտենական կո-
րուստն։ Որ կարօղդ ես ա̃մի,
ողորմեա՛ ինձ ա̃'ծ իմ․ տո՛ւր շը-
նորհ արտասուաց մեղուցեալ
հոգւոյս, ո՞չ զի լուացից զբազ-
մութի մեղաց․ զի ապրեցայց 'ի
ձեռաց անողորմ հրեշտակաց՝ որ
արկանեն զամբարիշտն 'ի հուր
գեհենին․ երանի՛ թէ լայի հա-
նապազ աղաչելով զքեզ ա̃ծ,
զի մի՛ անարժան գտայց 'ի ժա-
մուն՝ յորժամ գայցես․ և մի՛ լը-

ւայց զահաւոր զձայնն զայն , թէ երթ 'ի բաց մշա՛կդ անիրաւութե̅՝ ոչ գիտեմ ուստի ես ։

ՃԾ բարձրեալ միայն առանց մեղաց , շնորհեա՛ ինձ մեղաւորիս յաւուր յայնմիկ զբազում գըթութ̅ի քո ․ զի մի՛ յայտնեսցին ծածուկ ամբարշտութ̅իք իմ առաջի տեսողաց հրեշտակաց և հրեշտակապետաց , մարգարէից՝ առաքելոց և արդարոց սրբոց ։ Այլ ապրեցո՛ զիս զամբարիշտս շնորհօք ողորմութեան քո ․ ընկա՛լ զիս 'ի դրախտն փափկութ̅ ընդ կատարեալ արդարսն ․ ընկա՛լ զաղօթս մեղուցեալ ծառայիս քո բարեխօսութ̅բ սըրբոցն՝ որք հաճոյ եղեն քեզ , յիսո՛ւս ք̅ս տ̅ր մեր ։ Եւ քեզ

ընդ հօր և որ հոգւոյդ փառք
յաւիտեանս յաւիտենից ,
ամէն ։

Նորին դարձեալ աղօթք ։

Աղաչեմ զքեզ փրկիչ աշխարհի քո՛ , հայեա՛ յիս և ողորմեա՛ ինձ · փրկեա՛ զիս 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ · քանզի անարգեցի զքո՛ բարիսն զոր արարեր յիս 'ի մանկութենէ իմմէ ։ Զիս զտխմարս՝ զտգէտս և զանիմաստս՝ արարեր անօթ լի՛ գիտութեամբ · յաճախեաց յիս շնորհըն քո՝ և լցոյց զքաղց իմ՝ և զծարաւ իմ զովացոյց · և լուսա-

ւորեայց զխաւարեալ միտս իմ, և ժողովեայց ՚ի մոլորութէ զխորհուրդս իմ, և ելից ՚ի ծոց իմ։

Այժմ երկկրպագանեմ և աղաչեմ, անկանիմ և հայցեմ խոստովանելով զքումդ բարերարութէդ. կատարեա՛ յիս զխոստումն շնորհի քո, և պահեա՛ զնա ՚ի գանձի քում. զի դարձեալ տացես ինձ յաւուրն յայնմիկ։

Մի՛ բարկանար ինձ մա՛րդասէր. զի ոչ հանդուրժեմ ըսպառնալեաց քոց. յաղագս այսորիկ աղաչեմ ժտելով՝ զի առաւել քան զչափն յաճախեաց յիս. վասն զի լեզու իմ տկարացաւ՝ ոչ կարելով խօսել զշընորհս քումդ. հիացան և միտք իմ՝ ոչ բերելով զբազմութիւն

ալէաց Նորա ։

Կերպարան և ճառագայթ օրհնելոյ հօրդ՝ դադարեցո՛ առ իս ’ի հոսանաց Ն̃ր · զի իբրև զհուր բորբոքեալ բոցակիզէ զերիկամունս իմ և զսիրտ իմ։ Անդր դարձեալ պարգևեա՛ ինձ զնա և կեցո՛ զիս յարքայութ̃ քում · մի՛ յիշեր զանօրէնութիս իմ · յանդգնիմ՝ հայցեմ տո՛ւր ինձ զխնդրուածս իմ։ և արա՛ օթևանս օրհնել հարբ քո յաւուր յայտնութեան ։

Շնորհեա՛ ինձ քն̃ զհայցուածըս իմ · զի դու միա՛յն ես տըւօղ կենաց իմոց։ Եւ քեզ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Սրբոյն Աթանասի և սրբոյն աբբայ
Եփրեմի ասացեալ Խոստովանութի̃ ։

Եւ արդ՝ հրաժարելով ՚ի սատանայէ և յամ̃ խաբէութե̃ նր̃՝ ՚ի պատրանաց նր̃՝ ՚ի գնացից նր̃՝ և ՚ի պաշտօնէից նորա՝ և ՚ի հրեշտակաց նր̃, եկեալ առաջի ք̃ր եկեղեցւոյ խոստովանիմ և հաւատամ զհայր անսկիզբն՝ զորդին միածին ծնունդ ՚ի հօրէ, և զս̃բ հոգին բղխումն ՚ի հօրէ. երեք անձամբ և մի բնութբ̃ և մի ա̃ծութբ̃, անշփոթ միաւորութբ̃. և զանճառ տնօրէնութի̃ մարդացելոյ բանին ա̃յ ։

Եւ արդ՝ ես գերիս և արտասուելիս և որքան բան զօրէ դսրովելիս՝ մեղայ ամենասուրբ

երրորդութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

Մեղայ և սրբուհւոյ ա̃ծա̃ծնին և սրբոց հրեշտակաց և ա̃մ ընտրելոց սրբոց դասուց:

Մեղայ և ե̃ք մարմնոյն ք̃նի և պաշտելի արեանն. յիմանալիսն և՛ի զգալիս, անդէպ մտածութե̃բ՝ աներևոյթ սխալանօք, անճառ խաւարային այլանդակ խորհրդով:

Մեղա́յ մեղայ և հոգւովս և մարմնովս և մտօքս՝ և բանիւ՝ և գործով՝ և գիտութե̃բ և անգիտութե̃բ կամաւ և ակամայ: Եւ ա̃մ մարմնովս՝ երեք հարիւր վաթսուն և հինգ ջղուածովքըս, երկոտասան անդամօքս, հինգ զգայութե̃բս: Աչօքս յա-

րատ հայելով, և զա՟մ գեղեցկուի՟ նկարացն զննելով, և զվատթարմըն տեսանելով։ Ականջօքս՝ չարին ունկնդնելով, և ա՟մ քաղցրաձայնութե՟։ Հոտոտելեօքս՝ զմեղաց հոտն առնելով, և զա՟մ անուշահոտութի՟ս։ Բերանովս՝ ըղհամադամ քաղցրութիւնսն ճաշակելով, և զխառնակ և զանն՟բս անգիտութե՟։ Ձեռօքս բաղում մեղս շօշափելով։ Ոտիւքս յանպատշաճ տեղիս գնալով։

Մ՝եղայ ո՟յ մեղայ և վեց շարժմամբքս ՚ի վեր հպարտութե՟, ՚ի վայր տրտմութե՟։ Յառաջ յանդգնութե՟, յետուստ սրտմտութե՟։ Յաջ հոգեկան մեղօք, ձախ՝ մարմնական մեղօք։

Մ՝եղայ և տասն պատգամացն

ո՟յ՝ յանձնառականին և հրաժա-
րականին · զյանձնառականն
չեմ կատարեալ, և զհրաժարա-
կանն եմ արարեալ։

Մեղուցեալ եմ ո՟յ և հոգեւո-
րական կրիւքս, հասարակ ըզ-
գայութ՟իւս և մտօքս · և ա՟մ շը-
փոթմանց հետևելով, և ամբո-
խելով զիս՝ ՚ի յա՟ծահաճոյ հան-
դարտութենէն հեռացեալ եմ։

Նոյնպէս խաւարամած լի-
նելով եօթն մահու չափ մեղօք
մոլորեալ եմ · հպարտութ՟բ, ամ-
բարտաւանութ՟բ, ամբարհա-
ւանութ՟բ, գոռոզութ՟բ, սնա-
փառութ՟բ, փառասիրութ՟բ, պատ-
ուասիրութ՟բ, զգեստասիրութ՟բ,
պճնելով, անձնահաճելով, կեղ-
ծաւորելով, սուտ առաքինի

ձևանալով , զաղօթս 'ի ցոյց մարդկան առնելով , անարժանութք յեկեղեցի մտանելով, 'ի խաչ և 'ի բուրվառ և յաւետարան մերձենալով, և կարդալով։

Մ՝եղայ այ և թիւր խոստովանելով , և զմեղս պատճառելով, խեթիւ և ատելութք և անմաքուր վարուք և անոբ հոգւով զքն պատարագելով , զած հայր հայհոյելով, զորդին այ արհամարհելով, և զոբ հոգին թըշնամանելով , և զանբարկանալին ած 'ի բարկութի շարժելով 'ի վերայ աշխարհի և մարդկան ։

Ո՛հ որ յերևելիս ածապաշտ և աղօթօղ և պահեցօղ , և'ի ծածուկ թերահաւատ և ծոյլ , և յամ բարեաց ունայն ։ Յերևե-

լիս կուսան , և'ի ծածուկ վաւաշոտ • յերևելիս ժիր , և'ի ծածուկ թոյլ • յերևելիս ս̃բ , և'ի ծածուկ պիղծ • յերևելիս պարկեշտ՝ և'ի ծածուկ ագահ • յերևելիս ողորմած , և'ի ծածուկ անողորմ • յերևելիս աղքատասէր՝ և'ի ծածուկ աղքատատ̃եց • յերևելիս առաքինի , և'ի ծածուկ պղերգ • յերևելիս գովելի , և'ի ծածուկ պարսաւելի ։

Որդ՝ զորս ասացից և կամ զո՞րս թուեցից , երբ ո՛չ եզր կայ և ո՛չ թիւ ։ Մեղուցեալ եմ կարգիս զանձինս ընդ արդարս համարելով և զայլս քամահելով , զտօնս սրբոց ո՛չ մեծարելով • և հայհոյութ̃ մեղուցեալ եմ ա̃յ • զանուն միայն ունիմ քահանայի

և ոչ զգործն · զօրինակն ունիմ
և ոչ զճշմարտութի՟ն · քանզի ա՟մ
անպատրաստութ՟բ և անկարգութ՟բ
կալով՝ զմահուն օրն և զանաչառ
դատաստանն ա՟յ և զդժոխոց ա-
հերն և զարքայութ՟ե սէրն մո-
ռացայ կամապաշտելով, հակա-
ռակելով, անհնազանդ լինելով,
'ի հեզութ՟է և 'ի խոնարհութ՟է
փախչելով, զծերսն չպատուե-
լով, զծնօղսն չսիրելով· ստահա-
կութ՟բ շրջելով, մեղուցեալ եմ։

Մեղայ ա՟յ և բարկացողութ՟բ,
ցասմամբ, ստամբութ՟բ, դաւա-
նաբար յարձակելով, և զեղբարս
խածանելով, կագ և կռիւ առ-
նելով, և յիշոցք տալով, 'ի չար
կարծիս դատելով, խռով կա-
լով, սուտ հաշտութ՟ի առնելով,

և զհոգիս իմ կորուսանելով, և բարս գազանի ունելով, և զանբան անասունս անխնայ հարկանելով, 'ի մարդկան սիրոյն որոշելով, պառակտուԹն առնելով, բանսարկելով, խարդախելով, խորամանկելով, երկմտելով, Թերահաւատելով, բազում տըրտունջ և նզովք հանելով, զուր և անիրաւ զրպարտելով, քըրԹմնջելով, շոգմոգելով:

Մ՝եղայ մեղայ մեղայ, և նախանձ ունելով, մախալով, դիմադարձելով, ոխակալուԹբ, ատելուԹբ, քինահաձուԹբ, չարուԹբ, նենգելով, քամահելով, զչարելով, սուտ վկայելով, բամբասելով, արհամարհելով և զառաջնորդս եկեղեցւոյ և զվար

դապետս՝ և զծերս և զողջս , և զայլոց իրաւն սուտ առնելով՝ և զիմ սուտն իրաւ , զայլոց փոքրր մեղքն մեծ համարելով՝ և զիմ բազումս ծածկելով , զայլոց շիւղն գերան կարծելով՝ և զիմ գերանն շիւղ , զայլոց բարին չար ասելով՝ և զիմ չարն բարի , զայլոց լոյսն խաւար տեսանելով՝ և զիմ խաւարն լոյս , զայլոց առաքինութիւն մարդահաճութի դատելով՝ և զիմ մարդահաճութի առաքինութի · և յանդուգն լինելով 'ի մէջ բանից անկանելով , լրբելով , 'ի խրատուց երես դարձուցանելով՝ և առաջի ծերոց լռութբ ոչ կալով , և հրամանաց և բանից նց ոչ լսելով ։ Ուխտ դնելով և ոչ կատարելով

եւ անյուսութեամբ 'ի խորս տրտմութեան անկանելով․ զպատուիրանս Աստուծոյ արհամարհելով, սուրբ գրոց ունկն չդնելով, 'ի սուրբ հրեշտակէն իւրմէ չակնածելով, եւ 'ի բարեաց թափուր լինելով, ընդ չարսն խընդալով, զբարեկամսն ատելով, զթշնամիսն չսիրելով, զատելիսն աստուծոյ չատելով։

Ո՞թէ՝ զորքանութիւն որչափ կարացից յայտ բերել՝ որ բազում են քան զաւազ ծովու․ քանզի մեղուցեալ եմ Աստուծոյ եւ ագահութեամբ, արծաթասիրութեամբ, խաբելով, աւելի առնելով եւ պակաս տալով, վաշխառուասիրելով, կծծելով, գաղտ գողանալով, յայտնի յափշտակելով եւ զրկելով։ Աւելի ստանալով, աղքատին չողորմե-

լով, առ օտարսն չգթալով, զեղ-
բարս չխրելով, զկարօտեալսն
չդարմանելով, զհիւանդն չտե-
սանելով, տկարին չսպասաւորե-
լով, զաղքատս արհամարհելով,
զհարուստն գովելով, յաջողե-
լոցն ծառայելով, ունևորացն
սուտ հաճութի̃ առնելով, աչա-
ռելով, և մարդահաճոյ լինելով:
Սուտ երդուելով, և զա̃ծ 'ի
բարկութիւն շարժելով:

Մ`եղա՛յ մեղա՛յ և քան զհող
երկրի ծանրագոյն մեղայ. քանզի
մեղայ ո̃յ և որկրամոլութ̃բ՝ 'ի
կերակուրս և յըմպելիս ցանկա-
նալով, ուտելի առնլով՝ և անյագ-
ուտելով, զորովայնս խճողելով,
առանց ժամի և ժամարձակի ճա-
շակելով, զպահսն արհամարհե-

լով, առանց մեծի հիւանդութե
պգլխին սիրելով, զմարմնոյս
դարմանն հոգալով, զորովայնս
պաշտելով, և խաչին քի թշնամի
անուանելով, և լուսաւորչին կա-
նոնաց սևերես լինելով։

Մեղուցեալ եմ իմ ոք կար-
գիս՝ ծուլութբ և հեղգութբ,
անժուժկալ լինելով, ագահա-
նալով, զուսումն ատելով, դա-
տարկ կենալով, զոր գիրս ոչ
կարդալով, քնով դանդաղելով,
և 'ի ժամատեղն ծանրանալով,
արթուն ոչ կալով, և պատմուե
որոց միտ ոչ դնելով, բազմախօ-
սութիւն անելով, սաղմոսի ա-
կանջ ոչ դնելով, և կամ ձեռա-
գործով յապաղելով, յօրանըն-
ջելով, ձգտելով, ձանձրանալով,

յո՜յ ո՛չ երկնչելով, 'ի հրապարակ նստելով՝ շատախօս լինելով, 'ի թատերս և 'ի ծաղրս լկտեաց հեշտանալով, և ծաղր առնելով։

Մեղա՛յ ո՜յ մեղա՛յ մեղա՛յ և պոռնկական խորհրդով, գիճութբ, աղտեղութբ, ըղձախոհութբ, վավաշոտ ցանկութբ, զանազան և զազիր խորհրդով, 'ի գիշերի և 'ի տունջեան պէս պէս կերպարանօք՝ քնով և արթնութբ, և արատ հայելով, կատակ երգելով, անամօթ լինելով, լրբելով, ցոփ խօսելով, և տռփական մարմնաշարժութբ զմիտս աղտեղելով՝ առ իգականս և առ արուականս, առ անասնականն ապականեալ խորհրդով մեղանչելով, և առ ամ մոլորական պատ-

բանս՝ երազականն փորձութեց , քնոյ և արթնութե՝ որ 'ի ժամու և տարաժամու անկեալ է 'ի վր տառապեալ հոգւոյս , զոր չարին յօժարութբ մեղուցեալ եմ աստուծոյ :

Եւ արդ՝ ահա՛ յայտնեալ հր-րապարակեցի զորպիսութի մեղաց իմոց առաջի քո և ապաշաւեալ զղջացեալ եմ յամէ , և եկեալ 'ի խնդիր թողութե սրխալանաց իմոց : Եւ դու հայր մեր և տր տր հայցեա զթողութին այ , և շնորհեա քաւութի ինձ յայ՝ հրամանաւն զոր ունիս 'ի քրիստոսէ այ . որում փառք և գոհութի և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Աղօթք արձակման՝ առաքելոյ մեծի լուսաւորչին Գրիգորի։

Ողորմեսցի քեզ մարդասէրն ա̃ծ, և թողութի̃ շնորհեսցէ ա̃մ յանցանաց քոց խոստովանա-ցելոցն և մոռացելոցն. և ես կար-գաւս քահանայական իշխանուե̃ և հրամանաւն ա̃ծային, թէ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի ար-ձակեալ յերկինս, նովին բա-նիւն արձակեմ զքեզ յա̃մ մաս-նակցութէ̃ մեղաց քոց ’ի խոր-հրդոց ’ի բանից և ’ի գործոց՝ յանուն Հօր և Որդւոյ և Հոգ-ւոյն ս̃բյ։ Եւ դարձեալ՝ տամ զքեզ ’ի խորհուրդս սուրբ ե-կեղեցւոյ, զի զոր ինչ գործի-ցես բարիս՝ եղիցի քեզ ’ի բա-

բեգործութի̄ եւ 'ի փառս Հան-
դերձեալ կենացն , ամէն ։

Աղօթք պարձելոյն 'ի զղջումն ապաշ-
խարութեան ։

Անսկիզբն ա̄ծ եւ անհասանելի՝ բա՛ց զաչս սրտի իմոյ բանիւ գիտութե̄ քո՝ բաւական լինիլ գոհանալ զանուանէ քումմէ , գովել եւ փառաւորել զքեզ եւ արժանապէս գնալ 'ի ճանապարհս քո ։

Դա՛տաւոր արդար՝ երկայնամտեա՛ առ իս բազմամեղս քոյով մարդասիրութե̄դ ․ զի եղկելի եմ մեղօք՝ զեղխեալ անօրէնութե̄բ եւ զաղբիր գիջութե̄ զմարմինս իմ

ապականեցի։ Որ էիր յառաջ էականութե՟ ա՟ծ ընդ հօր՝ ընդ մեզ հաճեցար բնակիլ ընդ հողեղինացս, և ընդ մարդկան շըջեցար ընդ մեղաւորացս, Թո՛ղ տ՟ր զմեղս իմ և Թեթևացո՛ զծանրաբեռնեալս՝ ժտելով հայցեմ ՚ի քէն, զի ժամանակ է ապաշխարութեան։

՚Ի քէն հայցեմ բազումողորմ տ՟ր ազբիւր կենաց՝ լուսաւորեա՛ զաչս սրտի իմոյ լուսով գիտութե՟ քո։ Յո՛յս աշխարհի ք՟ս, ծագումն անճառելւոյ լուսոյ, կեանք՝ որոց սիրեն զքեզ, կերակուր անապականելի, կենդանութիւն յաւիտենից։

Հրով հոգւոյդ ս՟րբ՝ հալեա՛ զպղծութի՟ն ձմեռնացեալ սրտի ի-

մոյ , որ ծուլեալ է եղկելի գոր-
ծովք անօրէնութե ։ Ողորմեա՛
քո ածայնին ողորմութբդ զանուղ-
ղայ խորհուրդս իմ չար ուղե-
կանին աստի կենացս ։

Ա՛րեգ ճշմարտութե և ճառա-
գայթատու՝ մերկեա՛ յինէն զխա-
ւար մթացեալ մեղացս ։ Զեղկե-
լիս մեղօք յիշեա՛ քո ածութբդ
յահագին աւուրն յայնմիկ ա-
հեղ մեծի դատաստանին ։

Ի՛լէ կոծելոց նաւահանգիստ՝
և լիութի ունայնացելոցս յար-
դարութե և ունողիս զանօրէ-
նութի չար գործովք ։ Ի չարիս
չարչարեալ է անձն իմ , զինչ ա-
րարից մեղուցեալս անձամբս ․
պէս պէս ախտիւք պղծեցայ յա-
նառակութե ․ ընկեցայ ՚ի հայ-

բնական լուսոյն · Ջնջեցի զձե-
ռագիր որդէգրութե̃ կենաց ·
Ջեռուցի զհուր յաւիտենականն։
Ալ̃ սրտիւ կարդամ առ քեզ՝
ամենասուրբդ ա̃ծ · փառանգելոյ
ազնական , վիրաւորելոյ բը-
ժիշկ , տեղի տարակուսելոյ ,
կորուսելոյ խնդրօղ , մոլորելոյ
և գերելոյ դարձուցիչ , ապա-
ւէն ա̃մեցուն որք կարդան առ
քեզ։ Տուր տառապելոյ և տա-
րակուսելոյ գերելոյ ՚ի սատա-
նայէ զմեծ քո զողորմութիւն։
Ի. Հա՛ հասեալ եմ ՚ի դուռն
մահու չարաչար գործովք ի-
մովք , զոյս իմ ՚ի վեր համբառ-
նամ առ բարձրեալ տ̃րդ և բա-
րերար · հայցեմ ՚ի քէն՝ բա՛ց ըղ-
դուռն՝ ողորմութե̃ մեղուցելոյ

Հոգւոյ իմոյ , ո՞չ բացեր աւա-
զակին զդուռն դրախտին քո .
և մի՛ ամօթալից դարձուցաներ
զիս ՚ի քո առատ ողորմութ͞է ,
զի գին եմ ս͞բ արեան քո . Յիշեա՛
զիս և ողորմեա՛ ինձ ա͞ծ :

Որ անեղ և անսկիզբն ես՝ ա-
նստեղծ և արարիչ ա͞մ արարա-
ծոց . որ ո՛չ աշխարհս տանել ըզ-
քեզ կարէ , և ո՛չ երկինք բովան-
դակել կարեն . ՚ի վեր ես քան
զերկինս և անբաւ քան զծագս .
երևելիք և աներևոյթք բովան-
դակեալ են առաջի քո :

Դու տիրես ա͞մցուն և հրա-
մանաւ քո կառավարին ա͞մ ա-
րարածք : Դու աղքատացուցա-
նես , և դու մեծացուցանես .
դու սպանանես հարկանես և բը-

ժշկես ։ Դու ես ա̃ծ իմ և փրկիչ վտանգելոյս ՚ի սատանայէ, առողջացուցիչ հիւանդիս մեղօք · ընդունող աղօթից և կատարիչ խնդրուածոց · Նայեա՛ տ̃ր ՚ի պաղատանս իմ, և ընկա՛լ զիս մարդասիրութեամբ քո ։

Մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս, և մի՛ սրտմտութեամբ քո յանդիմաներ զիս · զի դու ես տ̃ր և արարիչ, հայր և ստեղծիչ · և ես առ ո՞վ երթիցեմ զի օգնութի իմ ՚ի քէն է ։ Հայեա՛ց ՚ի պաղատանս իմ, և ընկա՛լ զիս մարդասիրութ̃բ քո · զի քեզ մեղայ և զքեզ աղաչեմ և զքեզ խոստովանիմ ։

Մեղայ յերկինս և առաջի քո · մի՛ ընդ դատեալսն տանջեր զիս, և մի՛ ընդ դատապարտեալսն

պատուհասեր · այլ ընդ կամա-
րարս կամաց քոց ընկալցիս և
ընդ պաշօղս պատուիրանաց քոց
պահեա զիս · զի թէ առանց նե-
րելոյ զբազում յանցանս իմ քըն-
նես , ապա ընդունոյն է ինձ
խոստումն յարուէ · և հուր գե-
հեննին է ինձ ։ ժառանգութի · և
եթէ զչատարկաբանութիս իմ
և զանդէպ զայլ անօրէնութիս
իմ խնդրեսցես յինէն , ապա
երանեմ չեղելոյն յորովայնէ ·
Հայեա տր ՚ի պաղատանս իմ և
ընկալ զիս մարդասիրութդ քո ·
Ողորմեա ինձ որպէս քանա-
նացւոյն , ոպ պոռնկին , ոպ մաք-
սաւորին · և գթա յիս ոպ յա-
նառակ որդին · և որպ աւազա-
կին՝ շնորհեա զբազում յանցա-

նաց իմոց զթողութի՟․ ընկալ զիս որպ՟ զհայհոյիչն և զհալածիչն․ փարատեցո՛ զխաւար մեղաց յաչաց իմոց․

Լա՛ց զաչս իմ կլցեալ երկնային ցանկութ՟՝ երկնային լուսովդ․ և բժշկեա՛ զվիրաւորեալ լեզուս իմ ՚ի բամբասանաց։ Սրբեա՛ զսիրտ իմ ՚ի չար և ՚ի պիղծ խորհրդոց․ վասն զի քեզ ցանկամ ա՟ծդ իմ բարերարի և բազմոգութեթի իմոյ աղաչեմ։

Ո՛վ յաւիտենական ամոթո՟յ ամաչեցուցաներ զիս․ և մի՛ ահեղ դատաստանաւն դողացուցաներ։ Ո՛վ տիեզերական ճրագա բակաւն զիս յանդիմանիցեր․ և մի՛ անհներելի տանջանացն մատներ։

Ո՛վ սոսկալի Տէրդ պատու-

հասեր. այլ փրկեա զիս 'ի հրացե-
եալ հնոցէն, 'ի հրահոսեալ գե-
տոցն և յորդանացն չարաթունից,
'ի հանապազորդ նեղութենէ և 'ի
կրծոտել ատամանցն։ Եւ ընդա-
կեցո զիս ընդ կամարարս կամաց
քոց՝ յանանցական կեանն։ Զի
ընդ նոսին արժանի եղէց գո-
հանալով փառաւորել զՀայր և
զՈրդի և զՍուրբ Հոգին, ամէն։

Աղօթք զօրաւոր սրբոյն Գրիգորի Նա-
րեկացւոյն հրեշտակական վարդապե-
տի, վ̅ն արեանն տ̅ն մերոյն ամ̅
հեծութեանց, և հայցեն ողորմութեանցն։

Գլուխ։ ՂԵ

Սրբեդակն արդար. Ձայնաւ-
գայթ օրհնեալ. լուսոյ կեր-

պարան • փափուք անձկութե̃ • բարձրեալ անքննին • զօրեղ անպատում • բարւոյ բերկրութե̃ • յուսոյ տեսութե̃ • գովեալ երկնաւոր • Թագաւոր փառաց • քա̃ արարիչ • խոստովանեալ կեանք ։ Եւ արդ՝ զ՚Մերութե̃ վրիպանաց բազմախառն ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ , մատուցես յաղերս հաճութե̃ հօր քում բարձրելոյ ։ Որ վասն իմ ՚ի փորձ եկիր անխծից , կերպարանեալ զիմ նմանութի̃՝ ամենևին կենաց օրհնութի̃ , վերնոց և ներքնոց բարեխնամօղ տեսուչ համայնից ։ Զի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ՝ ա̃ծ և մ̃րդ բնորեցուն , որչափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգա-

ւորս կրից կարեկցել, ընդ իմ
պարտաւորիս միշտ աղօթելով
ազգակցաւ մարմնոյդ առելոյ 'ի
մէնջ՝ առ համապատիւդ.քո հայր.
Իսկ վասն արեանդ պատուա-
կանի միշտ մատուցելոյ 'ի հա-
ճոյն կամաց առաքչիդ՝ բարձ-
ցին վտանգք մեղուցեալ դատա-
պարտելոյս. Թողցին պարտիքն.
ապաքինեսցի ամօթն. մոռասցին
պատկառանքն. բարեգործեսցին
դատակնիքն. սատակեսցին որ-
դունքն. վերասցի լալն. հան-
դարտեսցէ կրճումն ատամանցն.
սպառեսցին ողբքն. հատցին ար-
տասուքն. մերժեսցի սուգն.
հալածեսցի խաւարն. վատնեսցի
հուրն սաստկութեն. հերքեսցին
տանջանարանքն բազմօրինակք.

Նկեսցէ՛ն գթութիւնք կամա-
զլիդ և պարգևողիդ կենաց ամե-
նից · ծագեսցի լոյս · արագես-
ցէ՛ փրկութիւն · հասցէ՛ օգնու-
թիւն · ժամանեսցէ՛ այցելութիւն ·
կանխեսցէ՛ ցօղ ողորմութեան ·
յառաջեսցէ՛ արբուսցէ՛ զանդաս
տանս պապաքեալ՝ անկեալ ոսկե-
րացս թշուառութեան 'ի վերջն մա-
հու · ծաղկեցուսցէ՛ պտղաբե-
րեսցէ՛ բաժակդ երկնաւոր ար-
եան կենարարիդ՝ զերկիրս խը-
նամեալ աւուրն լուսոյ · որ ան-
ծախապէս միշտ սպատարագի յի-
շատակ կենաց փրկութեան հոգւոց
ննջեցելոց ։ Զի ի ամիւ մահաց-
եալ հոգիս մարմնովս մեղաց՝ շը-
նորհօք քո գթած՝ 'ի քեզ զօ-
րացեալ քեւ նորոգեսցայց ՚ զա-

եալ 'ի մեղաց անմահ կենդանութե՟ 'ի յարութե՟ն արդարոց, հօր քում օրհնեցեալ: Ընդ որում քեզ փառք, և հոգւոյդ սրբոյ բարեբանութ՟ի՝ վայելչական գոհութեամբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

---

Աղօթք զօրաւոր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետին՝ առ 'ի պահպանութ՟ի 'ի դիւէ և 'ի քակտումն զօրութեան նորա:

Գլուխ: ՂԳ

Ո յաւիտենական. բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք 'ի մահու, և լոյս 'ի խաւ-

ւարի • յոյս ակն ունողաց , և երկայնմտութի տարակուսելոց , որ ամենարուեստ իմաստութե՜ քո՝ դարձուցանես յայգ զստուերս մահու , աննուա՛ղ ծագումն և անմա՛ւտ արեգակն • քանզի ո՛չ զօրէ ծածկել զփառս տրութե քո խաւար գիշերոյ ։ Որում կրկնի ծունր երկրպագութե ամ եղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց , և սանդարամետականաց • որ լսես զհեծութի կապելոց , և հայիս յաղօթս խոնարհաց , և ընդունիս զխնդրուածս նոցա • տ՛ծ իմ և թագաւոր իմ • կեա՛նք իմ և ապաւէ՛ն իմ • յո՛յս իմ և վստահութի իմ • յա՛ քո ա՛ծդ ամենայնի • տ՛րդ հանդուցեալ ՚ի հոգիս սրբոց • մխիթարութի

վշտաց՝ և քաւարան մեղուցե-
լոց, որ գիտես զա՟մ յառաջ քան
զլինել նոցա․ առաքեա՛ զպահ-
պանողական զօրութի՟ աջոյ քո,
և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի
և՚ի դիւէ չարէ։ Որպէս զի ընդ-
յիշատակ սոսկալի և սուրբ քո
անուանդ՝ միշտ համբուրեալ
զրթամբք հոգւոյ՝ ըղձուն շըն-
չոյ, կեցից պահպանեալ ընդ-
այնոսիկ՝ որ կարդան զքեզ ՚ի
բոլոր սրտէ։

Եւ՚ի դրոշմէ խաչի քոյոյ նը-
շանիդ, զոր ա՟ծային արեամբ քո
ներկեալ նորոգեցեր, և ՚ի նոյն
շնորհ որդեգրութե՟ զմեզ մկըր-
տեցեր, և ՚ի փառս պատկերի քո
նկարեալ՝ յօրինեցեր, այսու
պարգևօք ա՟ծականօք՝ ամաչես-

ցէ՛ սատանայ • քակտեցի՛ն մեքե-
նայքն • բարձցի՛ն որոգայթքն •
պարտեցի՛ն մարտուցելքն • պա-
կասեցի՛ն զէնքն սայրասուրք •
մերժեցի՛ մէգն • փարատեցի՛
խաւարն • մեկնեցի՛ մառախու-
ղըն ։ Բազուկ քո հովանասցի՛ ,
և աջ քո կնքեսցէ՛ • վասն զի գը-
թած ես և ողորմած , և անուն
քո կոչեցեալ է ՚ի վր ծառայից
քոց ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգ-
ւոյդ սբյ՝ փառք և իշխանութի
յաւիտեանս յաւիտենից ,
ամէն ։

Աղօթք զօրաւոր տեառն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետի · ՚ի վախճանի մերձ գոլն ուրուք՝ յամենեւին զօրութէ ՚ի քաւութի մեղաց, առ տէր ասելի ։

Գլուխ ։ ՀԳ

Թագաւո՛ր բարձրեալ հզօր ահաւոր՝ օրհնեալդ միայն տէր յս քս, քո՛ է փոխարկել յանակնկալս կենաց յուսահատութե զսատակիչ անէծս՝ առ կեցուցանօղ օրհնութիս · զպարսաւանս վհատութե՝ առ զուարթացուցիչ գովութի · ընդ ամօթոյն՝ համարձակութի · ընդ պատկառանացն՝ պատիւ · ընդ տարագրութեն՝ յոյս բարութե · ընդ բաժանմանն՝ ակնկալուի միութե · ընդ սպառնականացն բանից՝ ո-

ղըքական սփոփանս . ընդ միան-
գամ դատապարտութեն՝ կրկին
ազատութիւն:

Ողորմեա՛ տէ՛ր՝ մահու մեղա-
պարտիս յաւուր արձակման շըն-
չոյս կենդանութե, մինչ աչացս
ողորմագին հայեցուածս 'ի բար-
ձունս կողկողեցի, զբաղմարկած
եան ուղղոյն զանգերծ ընթա-
ցիցն զանփախչելին ճանապարհ
յաչս բերելով՝ մտացս տեսմամբ
ամիւ վտանկեալ. և'ի յերգ բնա
կութե յարկիս նկատեալ յե-
ղիցն շաւիղ, թշուառացեալ կի-
սամեռութբ, դիմօք այլայլու-
թեան, տատանմամբ մտացս,
կարկամ հառաչմամբ, նուաղ
հեծութբ՝ նրբական ձայնիւ,
յոգի թախծուե յոքնամանեայ

տարակուսանաց՝ 'ի խորոցս աներևութից զգործեցելոցս ողբալով հառաչեմ։ Կարօղ ես բարեգութ՝ և անդ հրաշագործել յաւէտ զօրեղութե՜՝ ասելով, թէ ո՛ղջ եղիցիր յոգւոյդ խորտակմանէ․ և կամ թողեալ լիցին քեզ մեղանք քո․ կամ թէ, երթ 'ի խաղաղութի՜ սրբեալ 'ի մեղաց։ Եւ զոր յայնմ ժամու ո՛չ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցի՛ս մարդասիրաբէս, ո՛վ երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց։ Յորժամ՝ որ այժմս բանապաճոյճ խրոխտաձայն սիգացող բարձրապարանոց՝ անկեալ դնիմ՛ դի անկենդան․ կարկեալ 'ի խօսից․ կաշկանդեալ ձեռօք․ լքեալ անդամօք․ խփեալ

շրթամբք · կափուցեալ աչօք ։ Տախտակ անշարժուն · կօճղ կիսայրեաց · արձան անզգայ · պատկեր անբարբառ · գոյութի՟ անշունչ · ողորմելի տեսիլ · աշխարելի կերպարան · ողբալի օրինակ · եղկելի դէմք · արտասուելի նմանութի՟ · լռեցեալ լեզու · ցամաքեալ խոտ · թօթափեալ ծաղիկ · ծորեալ գեղ · շիջեալ ղամբար · դատարկ կոկորդ · խոպանացեալ սիրտ · աղխեալ ազդարան · սպառեալ աղբիւր · թալկացեալ մարմին · ժողխեալ որովայն · քակտեալ տաղաւար · կոտորեալ ոստք · բաժանեալ յօդք · հատեալ ձայն · սղոցեալ արմատ · թողեալ տուն · հնձեալ արտ · տարրախուզեալ բոյս ·

օտարացեալ բարեկամ. մոռաց-
եալ պաշտօն . թաղեալ դար-
շութիւն . մերժեալ ատելի .
բարձեալ խէթ . անարգեալ կը-
մախք, և իբր զանպիտան առ ոտն
կոխեալ: Կարօտեալ այլոց մաղ-
թանաց, որք զհաւատոց թշուա-
ռիս՝ ձայնիւ նուազեալ աղերս
հառաչման, ցօղով արտասուաց՝
բարերարիդ գթութե՛ ՚ի բար-
ձունս տարածանեն: Զառ քեզ
դարձն յեղանակեն յարգահա-
տելով, զոր օրհնեմ. զնշան խա-
չիդ փրկութե՛, զոր երկրպա-
գեմ. զյարութե՛ն ճշմարտու՛ի,
որում հաւատամ. զփառացդ քո
յայտնու՛թի, զոր փառաւորեմ.
զդատաստանիդ ահաւորու՛թի,
զոր խոստովանիմ . զբանիցդ

յանդիմանութեան, յորմէ զար-
հուրիմ. զհոգւոյդ սրբոյ ինձ
ուղեկցութիւն, զոր պաշտեմ. զօծ-
մանդ տեառնագրութիւն, զոր և
համբուրեմ. զթագաւորելն ընդ
քեզ՝ տէ՛ր Յիսուս, որում պաղատիմ։
Արդ լքաւ՝ մերժեցաւ՝ բար-
ձաւ՝ տրոհեցաւ՝ փախեաւ՝ սը-
րացաւ՝ տեղի ետ կցորդութիւն
զուգութեան կենցաղոյս կենդա-
նութեան. և յուսոյդ որ ՚ի քեն
պարգև՝ մնացական և անջնջա-
կան յիշատակարան պահեցաւ։

Տէ՛ս ողորմութեան ՚ի տարակու-
սանս վտանգելոյս՝ միայն բարե-
գութ փառաւորեալ որդի Աստուծոյ,
քաւել՝ բժշկել՝ կենագործել՝
պաշտպանել՝ նորոգել՝ նկարել՝
կանգնել՝ հաստատել՝ վերստին

ստեղծագործել յերջանիկն ա-
նարատութ՟ի․ քո՛ է կարողու՟ի,
քո՛ է փրկութ՟ի, քո՛ ողորմու՟ի․
չէ՛ք քո անկարութ՟ի, այլ ամե-
նեւին զօրութ՟ի, բարձրութ՟ի,
իշխանու՟ի, անվախճան թագա-
ւորութ՟ի, իսկութ՟ի, ինքնու՟ի,
ամենատեղի բացարձակութ՟ի,
բարերարութ՟ի, լուսաւորու՟ի․
փառաւորեալ տիրապէս, ան-
պակաս և անյաւելուած, խըն-
կեալ խորհրդով անթարգմանել
եաւ յերրորդութեդ սրբում,
գոհաբանեալ յաւէտ և եւս առ
սմին 'ի նոյն պաշտօն հաւասա-
րութե միապատիւ զուգակա-
նութե, երէկ և այսօր՝ և յա-
ւիտենից յաւիտեանս, ամէն․

Ա՟Ծ և տ՟ր · կեանք և արարիչ · ողորմած · գթած · լոյս · երկայնամիտ · անոխակալ · մարդասէր · ամենագութ · պարգևատու · փրկիչ · օրհնեալ · գովեալ · բարեբանեալ ։ Դարան ամրութե՟ · պատսպարան վստահութեան · առանց նենգութե՟ բարի · առանց խաւարի ճառագայթ · քաւիչ մեղաց · ողջացուցիչ վիրաց · անհասանելեաց հընարք · անմատչելեաց հպաւոր · անյուսութե՟ ելք · անունն քո խոստովանեալ՝ ա՟յ որդի · և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշ-

տօն գոհաբանութե՟, յաւիտ-
եանս, ամէն։

’Ի խորոց սրտից խօսք ընդ ա՟յ։ ԽԱ.

Որդի՛ ա՟յ կենդանւոյ օրհնեալ
յա՟մի՝ հօրդ ահաւորի անքըն
նին ծնունդ, որ տկարանայ առ
’ի քէն և ոչ ինչ։ Որ ’ի ծագել
անստուեր նշուլից ողորմութե՟
քոյ փառաց, հալին մեղք։ հա-
լածին դևք։ ջնջին յանցանք։
խզին կապանք։ խորտակին շղ-
թայք։ կենդանածնին մահաց-
եալք։ բժշկին հարուածք։ ող-
ջանան վէրք։ բառնին ապակա-
նութի՟ք։ տեղի տան տխրուի՟ք։
նահանջին հեծուի՟ք։ փախնու-

խաւարին · մեկնի մէգն · մերժի մառախուղն · փարատի մռայլն · սպառի աղջամուղջն · վերանայ մութն · գնայ գիշերն · տարագրի տագնապն · չքանան չարիքն · հալածին յուսահատութիւնքն · և թագաւորէ ձեռն քո ամենակար՝ քաւիչդ ամենայնի։ Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս՝ այլ կեցուցանել, թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեանդ ։ Զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին · 'ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի · սկիզբն ամենայնի, և յամենայնի · ամենայն լրմամբ օրհնեալ 'ի բարձունս · և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ փառք յաւիտեանս, ամէն ։

Ընկա՛լ զաղերսութի տէր ամե
հզօր՝ զդառնացողիս զաղա-
չանս. մատի՛ր գթութի առ պատ-
կառեալս դիմօք. փարատեա՛ ա՛-
մենապարգև՝ զամօթական տըխ-
րութիւս. բա՛րձ յինէն ո՛ղորմած՝
զանբերելի ծանրութիւնս. ան-
ջրպետեա՛ հնարաւոր՝ զմահա-
ցու կրթութիւս. աւարեա՛ մի՛շտ
յաղթօղ՝ զխաբողին հաձուիս.
բացադրեա՛ վերնային՝ զմոլելոյն
մառախուղ. կնքեա՛ կեցուցիչ՝
զկորուսչին ընթացմունս. ցըր-
ուեա՛ ծա՛ծկատես՝ զըմբռնողին
չար գտմունս. խորտակեա՛ ա՛ն-
քննին՝ զմարտողին դիմեցմունս։
Տնագրեա՛ քո անուամբդ ըզ-

լուսանցոյց երդ յարկիս · պարփակեա՛ քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս · գծագրեա՛ քո արեամբդ զմուտ սեմոյ սենեկիս · կերպացո՛ զքո նշանդ ՚ի հետս ելից մաղթողիս · ամրացո՛ քո աջովդ զհանգստեանս խշտի · մաքրեսցե՛ս ՚ի հաղբից զծածկարան անկողնոյս · պահեսցե՛ս քո կամօքըդ զտառապեալ անձն ողւոյս · անխարդա՛խ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս · կացուսցե՛ս շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ · կարգեսցե՛ս ՚ի դիմի ընդդէմ դիւացն դասու ։ Տո՛ւր հանգիստ բերկրուե̅ մահահանգոյնս նիրհման ՚ի խորուե̅ գիշերիս , բարեխօսութ̅ հայցուածոց մ̅րյ ա̅ծածնին՝ և ա̅մ ընտրելոց ։

Ամփոփեալ պարուրեալ զպատու-
հան տեսութեց զգայարանացս
իմաստից անզարհուրելի զետեղ-
մամբ՝ 'ի ծփական խռովութեց,
կենցաղական զբաղմանց, անրջա
կան երազոց, խօլականաց ցնո-
րից, յիշատակաւքո յուսոյդ ան-
ճառելի պաշտպանեալ: Եւ ըն-
թացեալ վերստին 'ի նինջմանէ
ծանրութէ, ամենազգաստ արթ-
նութբ՝ հոգենորոգ զուարթութբ
'ի քեզ արձանացեալ, զայս ձայն
մաղթանաց՝ բուրմամբ հաւատոյ
քեզ ամէնօրհնեալ Թագաւոր
փառաց անճառից, փառաբանո-
ղաց երկնագումար խմբից եր-
գակցեալ՝ յերկինս առաքել: Զի
դու փառաւորեալ ես յամ արարա
ծոց յաւիտենս յաւիտենից, ամէն:

Մաղթանք առ Տէր Ածածինն՝ և առ Տէ
առաքելոցն Տոյ. յետ եկեղեցին տաս.

[illegible]ածլին ամենօրհ    նեալ.
զպարզուտանս մեր ըն    կալ.
'ի հանգստեան ժամուս հաս    եալ.
առ քեզ գոչեմք անձամբ թախծ    եալ:
Բանին կենաց բարձօղ ե    ղեր.
զանձ մարմնոյ պարագրե    ցեր.
առ բանն Ած բարեխօս    լեր.
'ի փորձանաց ըզմեզ փըր    կեր:
Գովեալ ես դու փայտ փըր    կութե.
ամենօրհնեալ յաղթօղ նը    շան.
'ի գիշերիս ըստուերա    կան.
ծագեա մեզ զլոյսդ արփիա    կան:
Դողան 'ի քէն գունդք խաւա    րին.
ամենահրաշ զէն արար    չին.
ըզմեզ պահեա շնորհիւ քոյ    ին.
'ի գիշերիս աղջամըղ    ջին:
Երկոտասան Տրք առաք    եալք.
եօթանասուն աշակերտ    եալք.
յանձառ լուսոյն լոյս անուան    եալք.
որթոյն կենաց պըտղաբեր    եալք.

Ձեզ աղաչեմք արտասուա գին·
և պաղատիմք կողկողա գին·
վանիչ լերուք դիւաց գըն դին·
ոչ մերձենալ առ մեզ չա րին։
Էին ընտրեալք բանին կե նաց·
գումարք դասուց տեսանո ղաց·
որք զապագայն ժամանա կաց·
գուշակեցիք հոգւով շնոր հաց։
Ընդ մեզ լերուք աղօթա կից·
որք աստուծոյ էք խօսա կից·
փրկել ըզ մեզ 'ի վտան գից·
'ի յարթնութեան և յերա զից։
Թագաւորին երկնաւո րի·
երկըրպագօղ 'ի յարգան դի·
մեծ կարապետ սուրբ ամլոր դի·
միջնորդ կենաց և օրի նի։
Ժամանեա՛ մեզ 'ի յօգնու թիւն·
զի մի՛ մտցուք 'ի փորձու թիւն·
մաքուր մարմնով լինիլ 'ի քուն·
արդար հոգւով մնալ ար թուն։
'Ի քէն հայցեմք արտասուա գին·
Նախավկայ տեառն արար չին·
Սբ ստեփաննոս բացօղ զեր կին·

տեսօղ զախտս յանձին ծնո ղին ։
Լեր բարեխօս արեամբ քոյ լին ·
առ մեզ հանգիստ 'ի յանկո ղին ·
արթուն լինիլ յառաւօ տին ·
բարեբանել զլոյսն անքըն նին ։
Խնդրեմք 'ի քէն հայր պատուա կան ·
լուսաւորիչ ազգի մարդ կան ·
տ͞ր տ͞ր գրիգոր պետ պարթև եան ·
լեր մեզ պարիսպ և պահա պան ։
Ծընողաբար 'ի մեզ գը թա́ ·
զցրուեալ որդիքս քո ժողով եա́ ·
յուրախութիւն ընդ մեզ կոչ եա́ ·
և 'ի բարին առաջնորդ եա́ ։
Կենդանարար թագաւո րին ·
դուք ճշմարիտ զինուորք նը մին ·
տ͞ր մարտիրոսք վըկայք փըրկ չին ·
որք յաղթեցիք զթըշնա մին ։
Հօրըն լուսոյ միշտ մաղթե ցէ́ք ·
զորդին ընդ հօր աղաչե ցէ́ք ·
հոգւոյն շնորհօք մեզ օգնե ցէ́ք ·
և 'ի բանտարկուէն զմեզ թափե ցէ́ք ։
Չխնափայլեալ երամք ընտ րեալ ·
Ճըգնաւորաց դասք երան եալ ·

Թռչնոց երկնից էք նման    եալ․
յայրս և ՚ի ծերպըս բընակ    եալ։
Դողեալ հոգւոյ մեր ՚ի մար    մին․
լերուք պարիսպք ընդդէմ չա    րին․
զի յաղթեսցուք հակառա    կին․
խորտակելով ըզ զէնս նո    րին։
Ճրագունք վառեալ լուսով ՚ի    լի․
սուրբ կուսանաց դասք երա    մի․
արժանի եղեալք առագաս    տին․
և անթառամ սուրբ պըսա    կին։
Մեզ բարեխօս լերուք սի    րով․
առ տէր յիսուս աղերսե    լով․
՚ի փորձանաց զմեզ փրկե    լով․
յանշէջ հրոյն ազատե    լով։
Յանեղ լուսոյ ա̃ծայ    ին․
լուսոյ ստեղծեալք բանիւ նո    րին․
զարդարեցայք հոգւով շնոր    հին․
դասք լինելի զօրք երկնայ    ին։
Նախախնամել զմեզ փութա    ջիք․
և յօգնութիւն առ մեզ հա    սիք․
որ յաստուածոյ հրաման ա    ռիք․
ով ճշմարիտ մեր սիրե    լիք։
Շընորհատու ազգի մարդ    կան․

տէր մեր յիսուս անքըննա կան.
ըզ մեզ պահեա՛ միշտ անսա սան.
աստի մինչ յօր քո գալըստ եան:
Ողորմութիւն մեզ պարգև եա՛.
զհիւանդ հոգիս մեր բըժըշ կեա՛.
'ի բանսարկուէն ըզ մեզ փըր կեա՛.
և 'ի չարեաց անփորձ պահ եա՛:
Զար իշխանքըն խաւա րին.
որք ընդ ծառայս քո մարտըն չին.
քո նըշանաւ սըրբոյ խա չին.
աներևոյթ կործանես ցին:
Պարգևիչ բարեաց մարդ կան.
յամենառատ յամենես եան.
պատրաստեցո՛ մեզ անխա փան.
զպէտս հոգւոյ և մարմնա կան:
Ձուր շընորհեա՛ ինձ արտաս ուաց.
զի լուացից զգործըս չար եաց.
արժան եղէց քոյ հարսան եաց.
ընդ իմաստուն սուրբ կուսա նաց:
Ո՛ահ բարի իմ՝ տէր յի սուս.
և հաց կենաց սովեալ հոգ ւոյս.
առաջնորդեա՛ մոլորե լոյս.
և կերակրեա՛ զմիտս ընդ մարմ՝ նոյս:

Սրբեմ զհոգիս յաղտոյ մե ղաց․
՚ի զանազան չար փորձա նաց․
տուր ինձ գնալ ըստ քո կա մաց․
զի արժանի եղէց փա ռաց։
Վիրաւորեաց զիս Թըշնա մին․
այն որ չկամի զկեանս մարդկայ ին․
զիս բըժըշկեա՛ տէր երկնայ ին․
լուսաւորեա՛ լուսով քոյ ին։
Տրտմեալ հոգւոյս լե՛ր ըսփո փիչ․
ցաւած մարմնոյս լե՛ր դարմա նիչ․
մոլոր մըտացըս լե՛ր ուղ ղիչ․
ամենառատ բարեաց տը ւիչ։
Րամից սրբոց աղաչա նաց․
իննեակ դասուց հրեղէն զօ րաց․
առաքելոց քոց սիրո ղաց․
մարգարէից տեսանո ղաց։
Ցանկալի հայրապե տաց․
և երջանիկ վարդապե տաց․
արիւնաներկ մարտիրո սաց․
և գերագոյն ճըգնաւո րաց։
Լուսապըսակ սուրբ կուսա նաց․
որք փեսայիդ սպասեն փա ռաց․
և ամենայն մաքուր ան ձանց․

Հետեւողաց քոյին կա մաց։
Փրկեա՛ զհոգիս ՚ի տանջա նաց.
զազրատեսիլ յանքուն որ դանց.
Լսել տո՛ւր զձայն քո աւետ եաց.
զոր խոստացար քոց սիրո ղաց։
Քեզ հօրդ փառք միշտ առա քեմք.
զորդիդ ընդ հօրըդ դաւա նեմք.
ըզ հոգիդ սուրբ բարեբա նեմք.
երրորդութեանդ երկըր պա գեմք.
ամէն։

Աստուծոյ հօր ձեռնտուութե՟ն՝ օգնականութեանն և յաջողութե՟ն՝ գոհու՟թի և փառս մատուցանեմք՝ ընդ որդւոյ և ընդ ս՟բյ հոգւոյն, որ ետ կարողու՟թի մեզ նուաստիցս՝ զսոյն զայս բարեխօս մեղուցելոց (այսինքն ըզ-տետրակս աղօթից ս՟բյ երանե-

լոյն Եփրեմի) ներկայ առնել տպագրութե՟ : Որք կամին սո-վլաւ ճանաչիլ եւ յանդիման լինել լալագին դիմօք առաջի աթոռոյ շնորհացն ա՟յ , եւ լսել զերանաւէտ ձայն նր՟՝ թէ մի՛ լար դե՛րի՝ բազմաց ողբալի . այլ արի՛ ա՛ռ զմխիթարակ հոգւոյդ քում ըզկենդանութի՟՝ զոր չարաչար մեղօքդ մեռուցեր : Այլեւ՝ որ ըզսա՛ ընթեռնու՝ ո՛չ կարօտի ջըրոյն սեղովմա առ ՚ի բուժիլ . այլ յինքենէ բղխեալ ջուր արտասուաց՝ լինի աւազան շնորհաց եւ բուժէ զախտս հոգեկան , ընդ նմին եւ զցաւս մարմնական :

Եւ զինչ ասելի է զաղօթից . զի աղօթիցն գոհութի՟ ՚ի սբ՟ցն՝

անդր քան զամենայն է , որով ինքեանք փայլեցան 'ի մարմնի՝ զանմարմնոցն բերելով յինքեանս զնմանութ̃ի , և հաճոյացան ա̃յ ։ Ընդորս և զմեզ մարդասէրն ա̃ծ քաւեալ 'ի մեղաց և արդարացուցեալ 'ի ձեռն աղօթից՝ փոխեսցէ՛ յարքայութիւն որդւոց իւրոց սիրելւոց ը̃ն մերոց յիսուսի քրիստոսի , որում փառք յաւիտեանս , ամէն ։

## ՎԵՐՋ